

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**Ծրագրի գիտական ղեկավար՝**

տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Ի. Աղաջանյան

**Կատարողներ՝**

տ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Վարդանյան

տ.գ.թ., դոցենտ Թ.Մ. Մկրտչյան

տ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Պետրոսյան

ասպիրանտ Հ.Հ. Մինասյան

ՀՏԴ 338.1

ԳՄԴ 65.9(2)23

Տ 776

Երաշխավորվել է հրատարակության  
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից

**Տ 776** **Տնտեսական աճի որակը / Ծրագրի գիտական ղեկավար՝** Հ.Ի. Աղաջանյան;  
**Կատարողներ՝** Ա.Ա. Վարդանյան, Թ.Մ. Մկրտչյան, Ա.Ա. Պետրոսյան, Հ.Հ. Մինաս-  
յան. - Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.- 86 էջ:

Դ/016

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԸ

2012–2013 ԹԹ. ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 338.1

ԳՄԴ 65.9(2)23

ISBN 978-9939-61-072-6

ԵՐԵՎԱՆ

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն  
2014

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի  
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

### Հետազոտության թեմայի արդիականություն

Տնտեսական զարգացումը երբեմն բնորոշվում է իբրև երկարաժամկետ գործընթաց, որն ապահովում է մեկ շնչին բաժին ընկնող եկամտի (արտադրանքի) աճը կամ, այլ կերպ ասած՝ տնտեսական աճը: Սակայն ժամանակակից տնտեսագիտության ընկալմամբ՝ հիմնական տնտեսական խնդիրները պայմանավորված են ոչ միայն աճով, այլև կառուցվածքային և ինստիտուցիոնալ փոփոխություններով, որոնք ազդում են կյանքի որակի վրա: Տնտեսական աճին է վերագրվում ապրանքների ու ծառայությունների արտադրության քանակական աճը, իսկ «տնտեսական զարգացում» եզրն ընդգրկում է տնտեսական պայմանների այնպիսի փոփոխություններ, որոնք հասարակության անդամների մեծամասնության համար կյանքը դարձնում են ավելի հարմարավետ:

Երկրի զարգացման գործընթացի ուսումնասիրումը չի սահմանափակվում միայն ինստիտուցիոնալ շրջանակներում ռեսուրսների արդյունավետ բաշխմամբ: Զարգացումը հաճախ մեկնաբանվում է նաև որպես այդ ինստիտուցիոնալ շրջանակների փոփոխման և աճի օպտիմալ ուղղության որոնման գործընթաց: Փոփոխությունների այսպիսի գործընթացը պետք է տեղի ունենա ինստիտուցիոնալ մակարդակում՝ ընթացիկ և կառուցվածքային տեղաշարժերին զուգընթաց: Որակական կառուցվածքային փոփոխությունները կարևոր են զարգացման ուղին բռնած երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար:

Հետևաբար՝ նմանօրինակ համակարգերում տնտեսական աճն այլ որակ կունենա, քան կայուն ինստիտուցիոնալ դաշտ և համապատասխան տնտեսական կառուցվածք ունեցող երկրներում, որ կհանգեցնի տարբեր հետևանքների (օրինակ՝ համընդհանուր բարեկեցության աճի, սոցիալական բեռնացվածության խորացման): Տնտեսական զարգացումը, լինելով բարդ,

տնական և բազմագործոնային գործընթաց, հիմնվում է տնտեսական աճի վրա: Տարբեր զարգացող երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսական աճը միշտ չէ, որ անխուսափելիորեն հանգեցնում է երկրի տնտեսական զարգացման և հասարակության ընդհանուր բարեկեցության աճի:

Այս համատեքստում, տնտեսական աճի որակի գնահատման նպատակով, անհրաժեշտ է պարզաբանել միջարք հիմնահարցեր՝ չափողականությունը տնտեսագիտության մեջ, տնտեսական աճի որակի չափողականությունը, տնտեսական աճի որակական բնութագրերը, տնտեսության ճյուղային կառուցվածքն ու տնտեսության զարգացման տեմպերը ՀՀ-ում, տնտեսական աճի որակը և աղքատության հարթահարումը, տնտեսության զգայունության աստիճանը շուկերի նկատմամբ:

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

## 1. Չափողականության խնդիրը տնտեսագիտության մեջ

Տնտեսագիտության մեջ չափողականության խնդիրը սկսվում է արժեքի տեսությունից: Տնտեսագիտական մտքի պատմությունից հայտնի են արժեքի տարբեր տեսություններ: Արժեքի աշխատանքային տեսության ներկայացուցիչները փորձում էին հիմնավորել, որ արժեքը արդյունքի (ապրանքի) մեջ առարկայացած աշխատանքն է և չափվում է աշխատաժամանակով: Բնականաբար, առաջացավ դրա *չափման* անհրաժեշտությունը: Այդ տեսության հիմնական ներկայացուցիչներից է Կ. Մարքսը, ով իր վերլուծության ընթացքում բախվեց լուրջ հակասությունների: Ա. Սմիթը, լինելով արժեքի աշխատանքային տեսության հիմնադիրներից, հրաժարվեց միագործոնային վերլուծության սկզբունքից և արժեքի ձևավորման հիմքում դրեց ոչ միայն աշխատանքը, այլ նաև կապիտալն ու հողը: Թեպետ Ա. Սմիթի տեսությունն առաջընթաց քայլ էր արժեքի էությունը բացահայտելու գործում, այնուամենայնիվ, դա չի նշանակում, թե նրա կողմից հաղթահարվեց բարիքի արժեքի չափողականության խնդիրը:

Արժեքի բնույթի բացահայտման գործում շրջադարձային դերակատարություն ունեցավ սահմանային օգտակարության տեսությունը: Ըստ այդ տեսության՝ արժեքի հիմքում արդյունքի օգտակարության մակարդակն է, որը պայմանավորված է դրա նկատմամբ պահանջմունքի բավարարման կամ հագեցվածության աստիճանով: Հետագայում Ա. Մարշալը, օգտագործելով սահմանային գնահատումների սկզբունքը, արժեքի ձևավորման հիմքը համարեց սահմանային օգտակարությունը, որը պայմանավորում է պահանջարկը, և սահմանային արտադրողականությունը, որը պայմանավորում է առաջարկը: Այնուհետև ներկայացվեցին այն գործոնները, որոնք ազդում են առաջարկի և պահանջարկի, հետևապես՝ բարիքի գնի վրա:

Բարիքի արժեքի չափողականության առումով առաջանում են մի շարք խնդիրներ: Դրանք են.

**1. Չափման միավորի ընտրությունը:** Այդ հարցն առաջին անգամ առաջ է քաշել Զ. Քեյնսը: Նա գրում է. «Երեք դժվարություն ավելի է խանգարել ինձ, և ես չեմ կարողացել հստակ ձևակերպել իմ մտքերը.... Առաջին՝ չափման միավորի ընտրությունը, որն ամբողջությամբ կիրառելի է տնտեսական համակարգի հետա-գոտության ժամանակ....»<sup>1</sup>: Եթե հստակ չէ չափման միավորը, ապա ինչպե՞ս գնահատել տնտեսական պարամետրերի քանակական և հատկապես որակական մեծությունը: Մաթեմատիկայում կամ ֆիզիկայում չափման միավորները հստակ են, բայց երբ գործ ունենք հասարակական երևույթների փոխհարաբերությունների հետ, բախվում ենք բազմաթիվ հակասությունների: Քեյնսի մոտեցումն այս խնդրի լուծմանն ավելի խորքային է և նորովի մեկնաբանման կարիք ունի: Նրա կարծիքով՝ տնտեսական պարամետրերի միջև փոխհարաբերությունները միջնորդավորված են և այնքան բազմաշերտ, որ դրանց չափելիությունը բավական բարդ է: Նա, մասնավորապես, գրում է. «Հասարակության կողմից ստեղծվող ապրանքների և ծառայությունների ամբողջությունը տարասեռ համալիր է, որը, խիստ ասած, *չի կարող լինել չափելի* (ընդգծումը մերն է՝ Հ. Ա.)»<sup>2</sup>: Եթե հայտնի չէ չափման միավորը, ապա տնտեսական երևույթների փոխհարաբերության քանակական ու որակական գնահատականը հնարավոր չէ հստակ ներկայացնել: Պատահական չէ, որ Քեյնսը տնտեսական երևույթների միջև առկա գործառության կախվածությունները ներկայացնում է ոչ բացահայտ ձևով: Նա, արժեքային ազդակների չափակցման դրամական գործիքին զուգընթաց, օգտագործում է նաև միավոր աշխատավարձը՝ դրանով իսկ փորձելով չեզոքացնել հնարավոր անճշտությունները:

**2. Սահմանային գնահատումների հակասականությունը:** Ինչպես սահմանային, այնպես էլ մարքսյան միջինացված մեծությունները վերացական են: Պատճառը նույնն է. գոյություն չունի միասնական արժեչափ: Ինչպես հայտնի է, օրդինալիստների մոտեցմամբ՝ օգտակարությունը չափելի չէ: Այդ խնդրի լուծման այլ սկզբունքներ առաջարկվեցին, սակայն հիմնավոր ուսմունք բարի-

<sup>1</sup> Keynes J., The General Theory of Employment, Interest and Money, Harcourt Brace, London, 1994, p. 37:

<sup>2</sup> Նույն տեղը:

քի արժեքի որոշման առումով այդպես էլ չձևավորվեց: Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք սահմանային գնահատման սկզբունքը կիրառել հոգևոր բարիքների օգտակարությունը որոշելիս:

**3. Փողի՝ որպես միասնական չափման միավորի հակասականությունը:** Արժեքի և դրա հետ կապված փողի տեսությունը կարելի է համարել տնտեսագիտության «աքիլլեսյան գարշապարը»: Փողի ծագումը, որի հիմքում էր միասնական արժեչափի ձևավորման անհրաժեշտությունը, միտված էր ապահովելու համապատասխան տնտեսական արդյունավետություն: Այն իրեն հատուկ գործառույթներով նպաստեց գործարքային ծախսերի կրճատմանը, տնտեսական գործընթացներին բնորոշ բազմաթիվ հակասությունների հաղթահարմանը, տնտեսավարող սուբյեկտների միջև կայուն փոխհարաբերությունների ձևավորմանը և այլն: Փողը, դառնալով տարբեր արդյունքների համադրման ու չափման սուուգանմուշ, հանգեցրեց իրացվելիության ամենաբարձր մակարդակի, որի հիմքի վրա նախ՝ Մենգերը ներկայացրեց իր հիմնական դրույթները, իսկ հետագայում Ջ. Քեյնսն առաջ քաշեց իրացվելիության (գործարքային, նախազգուշական, սպեկուլյատիվ) մոտիվների հայեցակարգը:

Անհրաժեշտ է նշել փողի՝ որպես միասնական արժեչափի ներքին հակասականությունը: Արժեքի հիմնախնդրի առումով բավական բարդ է յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափի գնահատումը, ինչը հիմնականում կատարվում է սահմանային գնահատումների սկզբունքի կիրառմամբ: Բայց, ինչպես վերը նշեցինք, այդ սկզբունքը ևս վերացական է, և գոյություն չունի որևէ մոդել, որի միջոցով հնարավոր լինի արտացոլել տնտեսական հարաբերությունների իրական փոխազդեցությունները և արդյունքները: Խնդիրն ավելի է բարդանում, երբ փորձում ենք տարբեր արդյունքների արժեքային համամասնությունները ներկայացնել փողի՝ որպես միասնական չափման սուուգանմուշի միջոցով: Այն, որպես այդպիսին, կատարյալ չէ, հետևապես՝ դրա միջոցով տարբեր բնույթի և նշանակության արդյունքների արժեքների համադրումը թերի է: Սա նշանակում է՝ խաթարվում է *փողի արժեքի չափման* միջոցի գործառույթը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ փողի՝ որպես միասնական արժեչափի միջոցով ճշգրտորեն չեն արտահայտվում բարիքների արժեքային համամասնությունները, և դրա գործառույթների խեղաթյուրումը կարող է դառնալ տնտեսական տատանումների պատճառ:

## 2. Տնտեսական աճի որակի չափողականությունը

Հայտնի է, որ ՀՆԱ մակարդակը չի կարող արտահայտել տնտեսական համակարգի իրական վիճակը, որովհետև դա, ըստ էության, քանակական ցուցանիշ է: Դրա միջոցով հնարավոր չէ ստույգ պատկերացում կազմել ընդհանուր բարեկեցության մասին: Ընդհանրապես, քանակական ցուցանիշները շատ խոցելի են, որովհետև դրանք գրեթե տեղեկատվություն չեն պարունակում երկույթի բավանդակության մասին: Նույնը վերաբերում է նաև տնտեսական աճի գնահատմանը: Այս առումով, կարևոր է պարզել տնտեսական աճի որակը, որը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու այս կամ այն երկրի ընդհանուր իրավիճակի մասին: Ուստի անհրաժեշտ է ընդգրկել ցուցանիշների այն համակարգը, որի միջոցով տնտեսական աճի որակը կարտացոլվի բազմակողմանիորեն:

Այսպես՝ նախևառաջ անհրաժեշտ է սահմանել տնտեսական աճի որակը: *Տնտեսական աճի որակը բարիքների արտադրության այն մակարդակն է, որ ապահովում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացումը՝ հիմքում ունենալով հոգևոր-մշակութային արժեհամակարգ:* Բնականաբար, անհրաժեշտ է հստակ ներկայացնել «բարիք» հասկացությունը: Տնտեսագիտական գրականության մեջ բարիքը սահմանվում է որպես մարդու պահանջմունքների բավարարման միջոց: Սակայն, կարծում ենք, համակողմանիորեն չի արտահայտվում դրա բովանդակությունը: Մարդու կենսագործունեությունը բազմաբնույթ է, որը դրսևորվում է տարբեր ուղղություններով: Վերջնական նպատակը բարիքների անհրաժեշտ մակարդակի ապահովումն է: *Բարիքն* ընդգրկում հասկացություն է՝ նյութական, հոգևոր-մշակութային, սոցիալական, առողջապահական, բնապահպանական, քաղաքա-

կան բովանդակությամբ: Օրինակ՝ քաղաքական ազատությունը, ազատ ժամանակը, կենսոլորտի մաքրությունը, մարդկանց առողջությունը, կրթությունը, համակեցության նորմերը բարիքի կարևոր տեսակներ են: Այդ բոլոր բաղադրամասերի անհրաժեշտ մակարդակի առկայությունն ապահովում է համապատասխան *բարեկեցիկ կյանք*: Այս առումով, տնտեսական աճի որակը գնահատելիս, պետք է հաշվի առնել բարիքների բոլոր տեսակների բավարարման մակարդակը: Հետևապես՝ առաջարկվում է ցուցանիշների համակարգ, որը բնութագրում է տնտեսական աճի որակը: Այդ ցուցանիշներն են.

**Առաջին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակը:** Տեղեկատվական տեխնոլոգիան օբյեկտի, երևույթի մասին տվյալների հավաքագրման, մշակման, փոխանցման միջոցների և մեթոդների ամբողջական գործընթաց է: Դրա նպատակը անհրաժեշտ տեղեկույթի ձեռքբերումն է՝ այս կամ այն ոլորտի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Փաստորեն, տեղեկատվական տեխնոլոգիաների կարևոր խնդիրներից է տեղեկույթի անհամաչափության հաղթահարումը: Ռեսուրսների արդյունավետ բաշխվածությամբ տնտեսական արդյունավետության բարձրացումը էականորեն պայմանավորված է տեղեկույթի անհամաչափության հաղթահարմամբ: Դա հնարավորություն է տալիս մեծ չափով կրճատելու գործարքային ծախսերը և ապահովելու արդյունավետության ավելի բարձր մակարդակ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. տեղեկատվական տեխնոլոգիական արտադրանքի և ՀՆԱ հարաբերակցությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների հավելվածի տեմպը, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինն արտահանման մեջ:

**Երկրորդ՝ գիտակրթական գործունեության մակարդակը:** Բոլոր ժամանակներում զարգացումը պայմանավորված է կրթությամբ և դրա հիմքի վրա ձևավորված գիտական մտքով: Որակական աճ են ապահովում այն երկրները, որոնք մեծ ուշադրություն են հատկացնում կրթությանն ու գիտությանը: «Գիտությունն ուժ է» թևավոր խոսքը ոչ միայն չի կորցրել իր այժմեականությունը, այլև ձեռք

է բերել նոր իմաստ: Կրթության և գիտության դերը չի կարող սահմանափակվել արտադրության մեջ դրանց արդյունքների ներդրմամբ՝ որպես տնտեսական աճի որակի ապահովման կարևոր բաղկացուցիչ: Դրանք հասարակության հոգևոր-մշակութային հիմնարար բնագավառներ են, որ ապահովում են ռազմավարական զարգացման հեռանկարը՝ դառնալով բարձրտեխնոլոգիական տնտեսության ձևավորման հիմքը: Ո՞րն է պատճառը, որ գիտատեխնիկական ավանդույթների կրողները և տնօրինողները մի քանի արևմտյան երկրներ են, որոնք, հիմնվելով մարդկության կրթական և գիտական հազարամյա նվաճումների վրա, կարողացել են ստեղծել համապատասխան հետազոտությունների անհրաժեշտ միջավայր ու մշակույթ, մրցունակ դառնալ հասարակական գործունեության բոլոր ոլորտներում: Գիտակրթական մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. գիտակրթական ծախսերի և ՀՆԱ հարաբերակցությունը, գիտակրթական ծախսերի հավելվածի տեմպը, գիտական ծախսերի մեջ պետական հատվածի տեսակարար կշիռը, տնտեսապես ակտիվ բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը:

**Երրորդ՝ տնտեսական անվտանգության մակարդակը:** Տնտեսական անվտանգության իրավիճակը գնահատվում է մի շարք ցուցանիշներով: Տնտեսական աճի որակը պետք է զուգակցվի տնտեսական անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Այս առումով, տնտեսական աճի որակն ավելի ընդգրկուն հասկացություն է, որը պայմանավորված է սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային բազմաթիվ երևույթներով: Տնտեսական աճի որակի ներքո չպետք է հասկանալ միայն բարիքների որակական ցուցանիշների բարելավում: Դա կապված է հասարակական կեցության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացման հետ, որտեղ, աստիճանաբար, առաջնային նշանակություն է ձեռք բերում մարդու հոգևոր-մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Տնտեսական անվտանգության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ է կիրառել ցուցանիշների հետևյալ համակարգը. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն յոթնյակի երկրների նույն ցուցանիշի համեմատությամբ,

ներդրումների մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ, բնակչության այն հատվածի տեսակարար կշիռը, որ ունի կենսանվազագույնից ցածր եկամուտներ, ներքին և արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ:

**Չորրորդ՝ բնապահպանության մակարդակը:** Տնտեսական աճը պետք է ուղեկցվի բնապահպանական հավասարակշռության անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Եթե տնտեսական աճն ուղեկցվում է բնության չարաշահմամբ, մթնոլորտի և ջրային ավազանի աղտոտմամբ, անտառների վերացմամբ, հողի էրոզիայով և այլն, որոնք ամբողջությամբ խաթարում են մարդու գոյատևման անհրաժեշտ կենսապայմանները, ապա մենք գործ ունենք ոչ թե տնտեսական առաջընթացի, այլ հետընթացի հետ: Բնապահպանության մակարդակը գնահատելու համար նպատակահարմար է կիրառել Յեյի համալսարանի կողմից հաշվարկված ցուցիչը:

**Հինգերորդ՝ առողջապահության մակարդակը:** Եթե տնտեսական աճն ուղեկցվում է բազմաթիվ հիվանդությունների ավելացմամբ, այսինքն՝ առկա է հասարակության անդամների առողջական վիճակի վատթարացում, և դրա հաղթահարման միջոցառումները բավարար մակարդակի վրա չեն գտնվում, ապա, բնականաբար, տնտեսական աճի որակը ևս անհրաժեշտ մակարդակի վրա չէ: Առողջապահության մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. առողջապահական ծախսերի և ՀՆԱ հարաբերակցությունը, մեկ բժշկին բաժին ընկնող բնակիչների թիվը, 1000 բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը, նորածինների մահացության մակարդակը, կյանքի սպասվող տևողությունը:

**Վեցերորդ՝ մշակույթը և ազատ ժամանակը:** Մշակույթը հոգևոր գործունեության ոլորտ է, որի դրսևորման ձևերից է գրականության, թատրոնի, կինոյի, երաժշտության, գեղանկարչության, քանդակագործության, արվեստի այլ ուղղությունների նկատմամբ պահանջմունքների բավարարումը: Հետևաբար՝ պահանջմունքի բավարարման այդ ոլորտը կապված է ազատ ժամանակի հետ: Այդ առումով, ազատ ժամանակը հասարակական բարիք է, որը բնութագրում է տվյալ երկրի զարգացման աստիճանը: Կ. Մարքսի խոսքով՝ «Ազատ ժամանակը տվյալ հասարակության հարստու-

թյան չափանիշն է»: Ազատ ժամանակը գնահատելու համար հարկ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. մեկ քառ. կմ-ի հաշվով տեսարժան վայրերի քանակը, հանգստի և մշակութային միջոցառումների անցկացման նպատակով կատարված ծախսերի տեսակարար կշիռը ծառայությունների ընդհանուր ծավալում, զբոսաշրջային ծառայությունների և ՀՆԱ հարաբերակցությունը:

**Յոթերորդ՝ նյութական բարեկեցության ապահովման մակարդակը:** Նյութական բարեկեցության հիմնական ցուցանիշներն են՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակը, միջին աշխատավարձի մակարդակը, դրամական միավորի գնողունակությունը, բնակտարածքի մակերեսը, ավտոմեքենաների թիվը և այլն: Նյութական բարեկեցության ապահովման մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (PPP), միջին աշխատավարձի մակարդակի և սպառողական զամբյուղի արժեքի հարաբերակցությունը, մեկ շնչի հաշվով բնակտարածքի մակերեսը, մեկ շնչի հաշվով ավտոմեքենաների թիվը:

**Ութերորդ՝ պարենային անվտանգության ապահովման մակարդակը:** Գյուղատնտեսական մթերքների արտադրության արտադրողականության բարձրացման նպատակով անընդհատ ավելացվում է քիմիական պարարտանյութերի օգտագործման քանակությունը: Էկոլոգիապես մաքուր սննդամթերքի տեսակարար կշիռը նվազում է: Սա նշանակում է՝ գյուղատնտեսական մթերքի քանակական աճը զուգակցվում է դրա որակի անկմամբ, ինչը կարող է բազմաթիվ անցանկալի հետևանքներ ունենալ մարդկանց առողջության առումով: Պարենային անվտանգության մակարդակը գնահատելու համար պետք է կիրառել հետևյալ ցուցանիշների համակարգը. բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար մթերքի ֆիզիկական մատչելիությունը, սոցիալական բոլոր խմբերի համար անհրաժեշտ քանակի և որակի սննդամթերքի տնտեսական մատչելիությունը, պարենային անկախությունը:

**Իններորդ՝ քաղաքական ազատության և կայունության ապահովման մակարդակը:** Ինչպես արդեն նշել ենք, բարիքը ընդգրկում հասկացություն է, որը ներառում է նաև մարդու քաղաքական ազատությունը: Դա մարդու կենսական պահանջմունքներ-

րից է, որը դրսևորվում է քաղաքական հայացքների, տեսակետների արտահայտման, ընտրություն կատարելու ազատության, ժողովրդավարական սկզբունքների կիրառման միջոցով: Տնտեսական աճը և քաղաքական կայունությունը փոխկապված են: Քաղաքական կայունությունը և անվտանգությունը բարիք են, որոնք ապահովում են տնտեսական կայուն աճ: Բացի դրանից, քաղաքական կայունությունը ձևավորում է համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ՝ որպես բարեկեցիկ կենսակերպի կարևորագույն բաղադրատարր: Քաղաքական ազատության մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել ազատության պալատի և քաղաքական կայունության ու անվտանգության ինդեքսները:

**Տասներորդ` ինստիտուտների կայացման մակարդակը:** Ինստիտուտների կայացումն ապահովում է մարդու անօտարելի իրավունքների պաշտպանություն, օրենքի գերակայություն, հասարակական բարիքների արտադրություն և այլն, որոնք հասարակության բնականոն կեսագործունեության հիմքն են: Ինստիտուտների կայացումն ու գործունեությունը նույնպես բարիք են և տնտեսական աճի որակի գնահատման կարևոր բաղադրիչ: Դրա մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել ինստիտուցիոնալ կատարողականի ցուցիչը (Համաշխարհային տնտեսական ֆորում), ձեռներեցության կատարողականի ցուցիչը:

**Տասնմեկերորդ` աշխատանքի պայմանները և անվտանգության ապահովման մակարդակը:** Աշխատանքն ինքնին հոգևոր բովանդակություն ունի, որի միջոցով մարդը ոչ միայն ստեղծում է բարիքներ իր կենսագործունեությունն ապահովելու համար, այլև բավարարում է ստեղծագործելու պահանջմունքը: Տնտեսական աճի հիմնական գործոնը հենց աշխատանքն է, սակայն կարևոր է պարզել, թե ինչպիսին են դրա պայմանները. հատկապես կարևորվում է անվտանգության պարամետրը: Եթե տնտեսական աճն ապահովվում է աշխատանքի ծանր պայմաններով, որը, բնականաբար, դրսևորվում է նաև ոչ համարժեք փոխհատուցմամբ, ապա նման տնտեսական աճը, որակի առումով, ճիշտ չի արտացոլում տնտեսական համակարգի իրական վիճակը: Աշխատանքի պայմանների և անվտանգության մակարդակը գնահատելու համար

անհրաժեշտ է կիրառել հետևյալ ցուցանիշները. զբաղվածության մեջ ռիսկային և վնասակար հատվածի տեսակարար կշիռը, արտակարգ իրավիճակների հաճախականության հետ կապված հարաբերական ցուցանիշը:

**Տասներկուերորդ` գործազրկության և աղքատության կրճատման մակարդակը:** Աշխատանքը մարդու պահանջմունքների բավարարման կարևոր տարր է: Մարդն ունի ստեղծագործելու պահանջմունք, որ բավարարում է աշխատանքային գործունեության միջոցով: Աշխատանքը մարդու եկամտի կարևոր աղբյուր է: Գործազրկության դեպքում նա զրկվում է եկամտի հիմնական աղբյուրից և սոցիալական պահանջմունքը բավարարելու հնարավորությունից: Ուստի պետք է զուգակցել տնտեսական աճի որակը և գործազրկության մակարդակը: Նույն տրամաբանությամբ՝ տնտեսական աճի որակը գնահատելիս պետք է հաշվի առնել աղքատության մակարդակը: Գործազրկության և աղքատության մակարդակը գնահատելու համար հարկ է կիրառել տեսության մեջ հայտնի ցուցանիշները:

**Տասներեքերորդ` ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակը:** Այդպիսի ենթակառուցվածքներից է ճանապարհային շինարարությունը, որի անհրաժեշտ մակարդակը մի կողմից՝ ապահովում է տնտեսական արդյունավետություն, մյուս կողմից՝ հարմարավետ պայմաններ բնակիչների տեղաշարժի համար: Կարևոր ենթակառուցվածքներից են հաղորդակցության միջոցները՝ հեռախոսակապը, համացանցը: Դրանք նույնպես ապահովում են տնտեսական արդյունավետություն և, միաժամանակ, բարեկեցիկ կյանք: Ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել հարաբերական ցուցանիշներ՝ կապված. 1. երկաթգծերի, ճանապարհների առկայության և դրանց որակի հետ, 2. կապի, համացանցի տարածվածության, որակի և գնի հետ, 3. օդանավակայանների, մեքենաների, բջջային հեռախոսների հագեցվածության հետ:

**Տասնչորսերորդ` կյանքի բավարարվածության կամ երջանկության ապահովման մակարդակը:** Կյանքի բավարարվածության հիմնական չափանիշը երջանկության ընկալումն է, որը կարող է տարբեր լինել: Մի շարք սոցիոլոգիական հետազոտություն-

ներով փորձ է արվում հիմնավորելու, որ ժամանակակից չափանիշներով զարգացած համարվող երկրներում մարդիկ իրենց այնքան երջանիկ չեն զգում, որքան համեմատաբար թույլ զարգացածներում: Գոյություն ունի նաև հակառակ տեսակետը, համաձայն որի՝ առկա է որոշակի կապ կյանքից բավարարվածության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակի միջև: Նույնիսկ ստեղծվել է ցուցանիշների որոշակի համակարգ, որի միջոցով գնահատվում է երջանկությունը: Դա կատարվում է սուբյեկտիվ (հարցումներ) և օբյեկտիվ (բժշկական և տնտեսական պարամետրեր) եղանակներով<sup>3</sup>: Այսպես օրինակ՝ ըստ հետազոտությունների, իրենց երջանիկ համարող մարդիկ ավելի հեշտ են հաղթահարում բազմաթիվ հիվանդություններ<sup>4</sup>: Բժշկական ցուցիչներն ունեն տնտեսական բովանդակություն այն առումով, որ կապված են աշխատանքի լարվածության և սթրեսի հետ: Սա նշանակում է՝ առկա է արժեհամակարգի վերագնահատման անհրաժեշտություն: Այդ առումով, տեղեկատվական հասարակարգի տեսաբանները հետաքրքիր միտումներ են բացահայտում քաղաքակրթական գործընթացներում: Վերջին հաշվով, հասարակության կենսագործունեության գնահատման չափանիշներից է այն հանգամանքը, թե մարդիկ իրենց երջանիկ համարո՞ւմ են, թե՞ ոչ: Կյանքի բավարարվածության կամ երջանկության ապահովման մակարդակը կարելի է գնահատել հետևյալ եղանակներով. սոցիոլոգիական հարցումների միջոցով (սուբյեկտիվ) և առողջապահական ու տնտեսական պարամետրերի համադրմամբ (օբյեկտիվ):

**Տասնհինգերորդ՝ արժեհամակարգի ապահովման մակարդակը:** Տնտեսական աճի որակի հիմքը տվյալ ազգի կամ հավաքականության արժեհամակարգն է: Տնտեսական համակարգը հոգևոր-մշակութայինի աճանցյալն է: Վերջինս է որոշում տեխնոլոգիական զարգացման մակարդակը, տնտեսության կազմակերպման արդյունավետությունը, մրցունակության աստիճանը և այլն: Տնտեսական համակարգի բնույթը պայմանավորված է քաղաքակրթական գործընթացներով՝ հակասություններով լի պատմական

զարգացման ամբողջ շղթայով: Ժամանակակից մրցակցությունը քաղաքակրթությունների մրցակցություն է: Տնտեսական աճի որակը բխում է քաղաքակրթական գործընթացների տրամաբանությունից: Դրա գնահատման վերոնշյալ բաղադրիչների մակարդակը պայմանավորված է քաղաքակրթական գործընթացներով: Արժեքային համակարգի մակարդակը կարելի է որոշել՝ գնահատելով հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ վերաբերմունքը, իրավագիտակցության, կոռուպցիայի, հանդուրժողականության մակարդակը:

<sup>3</sup> Տե՛ս **Антипина О.**, Экономическая теория счастья как направление научных исследований, „Вопросы экономики“, N 3, էջ 95-107:

<sup>4</sup> Նույն տեղում:



## 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### 1. Հիմնախնդրի բնույթը և ընդհանուր շրջանակը

Տնտեսական աճի խոշոր տեսաբան Ռոբերտ Սոլոուի գնահատմամբ՝ «...դեռևս դժվար է պարզել, թե ուր է ընթանում աճի տեսությունը»<sup>5</sup>: Տնտեսական աճի վերաբերյալ գրականության, ինչպես նաև քաղաքականության մեջ տիրապետող է եղել այն մտայնությունը, որ գերխնդիրը հենց տնտեսական աճն է՝ բավական է այն լուծել, և հեշտությամբ կլուծվեն նաև մյուս հարցերը: Պատմականորեն, միառժամանակ, դա տեղի է ունեցել: Սակայն վերջին տասնամյակների զարգացումները ստիպում են հրաժարվել այդ պատկերացումից, քանի որ այն արդեն հերքվում է ծավալված միտումներով: Եթե տնտեսական աճն անհրաժեշտ է, ապա դեռևս բավարար չէ: Աճի ապահովումը հիմնական մակրոտնտեսական նպատակներից է, բայց ամենևին միակը չէ, հետևաբար՝ հարկ է այն համակցել մյուս նպատակների հետ: Տնտեսական աճի նշանակությունը կարևորվել է նաև գործնականում դրա քանակական կողմերի գերազնահատումով: Առաջնահերթ է համարվել աճի բարձր տեմպերի ապահովումը: Դա նշանակում է, որ «նախ՝ քանակը, հետո՝ որակը» մոտեցումը պետք է փոխարինել ի սկզբանե դրանց համադրումով:

Նշված մտայնությունը զգալի չափով պահպանվել է: Սակայն եղել են, կան ու ծավալվելու միտում ունեն նաև այլընտրանքային մոտեցումներ: Այսպես՝ կրկին արդիականացվում է աճի սահմանների վերաբերյալ հայեցակետը<sup>6</sup>: Ժամանակակից այլ հեղինակներ ևս արտահայտում են սկզբունքորեն տարբեր դիրքորոշում: Ռոբերտ Գորդոնը պնդում է, որ «Տնտեսական աճը չի կարող լինել շարունակական երկարաժամկետ գործընթաց, որ տևում է հա-

վերժ»<sup>7</sup>: Ռիչարդ Հեյնբերգն իր գիրքը վերնագրել է «Աճի վերջը՝ հարմարվելով մեր նոր տնտեսական իրականությանը»<sup>8</sup>, իսկ Թիմ Ջեքսոնը՝ «Բարգավաճում առանց աճի՝ տնտեսագիտություն վերջավոր մոլորակի համար»<sup>9</sup>: Այդօրինակ հարցադրումները ներկայումս հրատապ են զարգացած երկրների համար, որոնցում սպառման ծավալներն արդեն իսկ չափազանց մեծ են, ուստի կարևորվում են կյանքի որակի բարելավման մյուս գործոնները: Ինչ վերաբերում է չզարգացած և զարգացող երկրներին, ապա դրանց համար տնտեսական աճը դեռևս տևականորեն կպահպանի առաջնահերթությունը: Պարզապես անհրաժեշտ է աճի բոլոր փուլերում հիմնախնդիրների լուծումը որոնել քանակական ու որակական բնութագրերի միասնական տիրույթում:

Տնտեսական աճը՝ տարածված բնորոշմամբ, ծավալային առումով և/կամ ըստ մարդաշնչի՝ երկրում իրական ՀՆԱ մեծացումն է որոշակի ժամանակահատվածում: Այդ սահմանումը տրված է հիմնականում քանակական տեսանկյունից, հետևաբար՝ այն չի կարող բացառիկ հիմք ծառայել տնտեսական աճի որակական բազմապիսի բնութագրերի լիարժեք բացահայտման և համակարգման համար<sup>10</sup>: Անհրաժեշտ է հենվել տնտեսական աճի՝ հայեցակարգային

<sup>5</sup> Solow R., Toward a Macroeconomics of the Medium Run //Journal of Economic Perspectives, 2000, V. 14, N 1, p. 151.

<sup>6</sup> Meadows D.H., Randers J., Meadows D.L. Limits to Growth: The 30-Year Update, Chelsea Green Publishing, 2004, 338 p.

<sup>7</sup> Gordon R., Is U.S. Economic Growth Over? Faltering Innovation Confronts the Six Headwinds. NBER Working Paper No. 18315, Issued in August 2012, p. 3.

<sup>8</sup> Heinberg R., The End of Growth: Adapting to Our New Economic Reality. New Society Publishers; Original edition, 2011. 336 p.

<sup>9</sup> Jackson T., Prosperity without Growth: Economics for a Finite Planet. Routledge; Reprint edition, 2011. 288 p.

<sup>10</sup> Այդ ցուցանիշների էական տարբերություններն ունեն նաև որակական բնույթ: Դա արտահայտված է մարդաշնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշների հիման վրա՝ երկրների տնտեսական դասակարգման մեջ, որտեղ արտացոլվում են դրանց զարգացման տարբեր մակարդակները: Իրական ՀՆԱ ծավալը և մարդաշնչի հաշվով դրա մեծությունը, թեև կապակցված են բնակչության թվի ու դինամիկայի հաշվառումով, ունեն նաև առանձնացող իմաստային նշանակություն: Մյուս կողմից՝ ՀՆԱ մեծությունն ու դինամիկան ինքնին մեծ կարևորություն ունեն, քանի որ բնութագրում են երկրի տնտեսության ներուժը, մասշտաբները, տնտեսական հզորության աստիճանը: Երկրների միջև համեմատության առումով հայտնի փաստ է, որ կարող են համընկնել ա) ծավալով շատ մեծ ՀՆԱ-ն և մարդաշնչի հաշվով բավականաչափ փոքր ՀՆԱ-ն, բ) ծավալով համեստ, բայց մարդաշնչի հաշվով աշխարհում ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշները: Ասվածից հետևում է, որ տնտեսական աճի

առումով խորքային ընկալումների վրա: Տվյալ չափանիշին համար-  
ժեք կարող է լինել Սայմոն Կուզնեցի բնորոշումը: Դրա համաձայն՝  
երկրի տնտեսական աճը նրա բնակչությանը ավելի ու ավելի բազ-  
մազան տնտեսական բարիքներ առաջարկելու կարողության եր-  
կարաժամկետ մեծացումն է, ընդ որում, այդ հարաճուն կարողու-  
թյունը հիմնված է առաջադիմող տեխնոլոգիայի և պահանջվող  
ինստիտուցիոնալ ու գաղափարական կարգավորումների վրա<sup>11</sup>:  
Ըստ էության, այստեղ ընդգծվել է մի քանի տեսանկյուն: Նախ՝  
տնտեսական աճը բնույթով երկարաժամկետ գործընթաց է:  
Իհարկե, այն ունի նաև կարճաժամկետ ու միջնաժամկետ դրսևո-  
րումներ, սակայն որակական բնութագրման, մասնավորապես՝  
աճի ինքնապահպանվող բնույթի հաստատման համար ընդհան-  
րացնող, հետևապես՝ նախընտրելի է երկարաժամկետ տրենդի  
հաշվառումը: Համենայնդեպս, տնտեսական աճի որակը կարող է  
գնահատվել ժամանակային նշված կտրվածքների համադրումով:

Մյուս շեշտադրումը երկրի կարողության շարունակական մե-  
ծացումն է՝ իր բնակչության համար ապահովելու ավելի բազմա-  
զան բարիքների առաջարկ: Նման մոտեցումն էական է տնտեսա-  
կան աճի որակի տեսանկյունից, ուստի դրա չափանիշներից են  
թողարկվող բարիքների բազմապիսության աստիճանը և դինա-  
միկան, որոնք արտացոլում են տնտեսության բազմազանեցման  
մակարդակը և փոփոխման միտումը: Որոշիչ է այն հիմնարար գա-  
ղափարը, որ տնտեսական աճը երկրի բնակչության պահանջ-  
մունքների բավարարման կարողության մեծացումն է, ինչն ընդ-  
գծում է տնտեսական աճի վերջնական նպատակը, որին ծառայելու  
չափով էլ այն իմաստավորվում է: Նպատակահարմար է նորմատի-  
վային տեսակետից սա դարձնել տնտեսական աճի որակի ընդ-  
հանրացված գնահատման հենք և ուղեցույց, քանի որ տնտեսա-  
կան աճ ինքնանպատակ չէ, այլ միջոց՝ բնակչության կենսամա-  
կարդակի ապահովման և դրա պարամետրերի բարելավման:

ընդհանուր ծավալային և մարդաշնչային ցուցանիշները պետք է օգտագործել ոչ  
թե փոխադարձաբար փոխարինելի, այլ փոխլրացնող դիտարկելու մոտեցումով:

<sup>11</sup> Kuznets S., Modern Economic Growth: Findings and Reflections, Nobel Lecture  
Delivered in Stockholm. American Economic Review 63, 1973, p. 247.

Ս. Կուզնեցի բնորոշումը սկզբունքորեն կարևորում է տեխնոլո-  
գիայի դերը տնտեսական աճի արդի գործընթացում, այսինքն՝  
ընդգծում է նաև դրա ապահովման հանգուցային միջոցը: Սա  
նույնպես տնտեսական աճի որակի բնութագրման հիմնարար մո-  
տեցում է. առանց առաջադիմող տեխնոլոգիաների կիրառման  
պարզապես բացառվում է որակյալ աճի հնարավորությունը: Մյուս  
կողմից՝ որքան ավելի դինամիկ է տեխնոլոգիական առաջընթացը  
և զանգվածային՝ դրա արդյունքների օգտագործումը, այդքան, որ-  
պես կանոն, նշանակալից է դառնում որակական բնութագրերի  
գերակայությունը: Համենայնդեպս, արդի որակյալ աճը ոչ մի  
կերպ չի կարող շրջանցել տեխնոլոգիական արդիականացումը.  
հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացումները ոչ միայն քա-  
նակապես տնտեսական աճի ապահովման, այլև դրա որակական  
բարելավման հիմնական աղբյուր են:

Քննարկվող բնորոշման եզրափակիչ շեշտադրումը վերաբերում  
է ինստիտուցիոնալ ու գաղափարական այն կարգավորումներին,  
որ անհրաժեշտ միջավայր են ապահովում նշված կարողության  
ձևավորման, պահպանման և մեծացման համար: Արդի պայման-  
ներում այս հանգամանքը որոշիչ նշանակություն է ստացել, քանի  
որ տնտեսական աճը ինքնաբավ, մեկուսի գործընթաց չէ՝ ան-  
նպաստ ինստիտուցիոնալ պայմաններում բացառվում է տևական  
ինքնապահպանվող աճի հնարավորությունը:

## 2. Տնտեսական աճի որակի հիմնական բաղադրիչները

*Տնտեսական աճի որակի հիմնական բաղադրիչներն են՝*

- Թողարկված վերջնական բարիքների որակը և դրա դինա-  
միկան: Նույնիսկ եթե ՀՆԱ ֆիզիկական ծավալը մնա անփո-  
փոխ, սակայն, միաժամանակ, բարձրանա վերջնական բա-  
րիքների որակը, ապա դա տնտեսական դինամիկայի որա-  
կական բնութագրերի բարելավում է:
- Թողարկվող արտադրանքի մրցունակության աստիճանը և  
դրա բնութագրերի դինամիկան: Որակյալ տնտեսական աճը  
նշանակում է նաև ներքին և/կամ արտաքին շուկաներում  
մրցունակության ձեռքբերում, պահպանում ու ամրապնդում:
- Տնտեսական աճի և զարգացման ներուժի որակական բնու-  
թագրերը և դրանց դինամիկան: Որակյալ տնտեսական աճը

նաև տնտեսության արտադրական հնարավորությունների ձևավորման, ընդլայնման, կատարելագործման ու պատշաճ օգտագործման գործընթացների համադրություն է: Դա նշանակում է, որ քննարկվող հարցում էական է ներուժային (պոտենցիալ) ՀՆԱ կտրվածքով դինամիկայի դիտարկումը:

- Տնտեսական աճի աղբյուրների, ռեսուրսային ապահովվածության աստիճանի, ինչպես նաև ուղղակիորեն մասնակցող ու ազդող գործոնների որակական բնութագրերը և դրանց դինամիկան: Այստեղ ելակետն այն է, որ տնտեսական աճը նախ ընթանում է առաջարկի տիրույթում:
- Տեղաբաշխման, տեխնիկատնտեսական և սոցիալ-տնտեսական արդյունավետության ցուցանիշները, որոնց հիման վրա ձևավորված ամփոփ գնահատականը հանգուցային է տնտեսական աճի որակի ու դրա դինամիկայի բնութագրման համար:
- Տնտեսական աճի դինամիզմը բնութագրող ցուցանիշները՝ դրա տեմպերի մեծությունն ու փոփոխությունը, կայունությունը, անընդհատ շարունակման տևողությունը, աննպաստ գործոններին դիմակայելու, դրանք հաղթահարելու կարողությունը և արագությունը, այսինքն՝ տնտեսական աճի ինքնապահպանող բնույթի ապահովումը:
- Հավելածի կշիռը բացարձակ արտահայտությամբ: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս միակողմանիորեն չսահմանափակվելու տեմպի հարաբերական մեծությամբ, քանի որ, կախված ՀՆԱ-ի տարբեր չափերից, աճի միևնույն տեմպին կարող են համապատասխանել դրա կշռի միանգամայն տարբեր մեծություններ:
- Տնտեսական աճի համար նպաստավոր պայմանների կամ միջավայրային գործոնների որակը և դրանում փոփոխությունների միտումը: Նկատի են առնվում ձեռնարկատիրական, ներդրումային և աշխատանքային գործունեության մթնոլորտի տարբեր բնութագրերը:
- Կառուցվածքային կերպափոխումները, որ երկարաժամկետում ընթանում են ազգային տնտեսության կառուցվածքում՝ ա) ճյուղերի, հատվածների ու տարածաշրջանների կտրվածքով, բ) տնտեսական բարիքների տեսականու, հարաբերակ-

ցության փոփոխման և զբաղվածության տեղաշարժերի առումով, գ) խոշոր, միջին և փոքր գործարարության տեսակարար կշռի և հարաբերական դերի փոփոխությունների իմաստով, դ) արտադրական, սոցիալական, շուկայական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներում, ե) ՀՆԱ մեծության մեջ՝ ըստ ծախսերի և եկամուտների համամասնություններում:

- Տնտեսական աճի շնորհիվ՝ հանրության կենսապահովման ու բարեկեցության բարձրացման հիմնախնդիրների լուծման հաջողության և ընդգրկման աստիճանը: Որակյալ տնտեսական աճի համատեքստում առաջնահերթ են եթե ոչ լրիվ, ապա գոնե բարձր զբաղվածության, արդարացի փոխհատուցման ապահովումը և շահագործման բացառումը, դրանց վրա հենվելով՝ զանգվածային ու տևական գործազրկության հաղթահարումը, աղքատության էական կրճատումը, մասնավորապես՝ աշխատողների աղքատության վերացումը:
- Արտաքին տնտեսական կապերի տիրույթում երկրների դիրքը, դրանց միջև ստատիկ ու դինամիկ առումով համադրումների ու համեմատությունների տարբեր ցուցանիշները:
- Տնտեսական աճի խթանման և կարգավորման քաղաքականության որակը: Այն պայմանավորված է զարգացման ռազմավարական մոտեցումների հիմնավորությամբ, հատկապես՝ հեռահար ճիշտ նպատակադրումներով, հնարավորությունների իրատեսական գնահատումով և դրանց արդյունավետ գործադրման կարողությամբ:

**Այսպիսով՝** տնտեսական աճի որակի բաղադրիչները տարաբնույթ են և շաղկապված փոխազդեցության բարդ գործընթացում: Այդ բաղադրիչները կարելի է դասակարգել երեք խմբում՝ արդյունքային, գործոնային և պրոցեսային (գործընթացային): Գործոնները համակցվում են, ինչը պրոցեսի սկիզբն է, և հետագայում ստացվում են որոշակի արդյունքներ: Բացի այդ, դրանց միջև կան նաև փոխակերպումներ. գործոնների ձևավորումը, պահպանումը, նորացումը գործընթացներ են, իսկ գործոններն ինքնին՝ դրանց արդյունքներ:

### 3. Տնտեսական աճի որակը զարգացման հայեցակարգի համատեքստում

Տնտեսական աճի որակական բաղադրիչների ընդհանրացումը պահանջում է համապատասխան հայեցակարգային հիմք: Այդ դեռի լիարժեք կատարումը օբյեկտիվորեն հնարավոր և անհրաժեշտ է զարգացման արդի խորքային պատկերացումների տեսագործական ընդունմամբ: Առաջադրվել է հետևյալ հիմնարար դրույթը. որակյալ է այն տնտեսական աճը, որը համատեղելի է զարգացման հետ: Նպատակահարմար է քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ ներկա և ապագա ուսումնասիրությունները բխեցնել նշված մոտեցումից, իսկ քաղաքականության շրջանակում որոշումների ընդունումը և իրագործումն ուղղորդել դրա տրամաբանությամբ: Դա կարելի է անվանել զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի մոդել:

Տնտեսական աճի և զարգացման նույնացումը կամ զարգացման հանգեցումը տնտեսական աճին մակերեսային ու միակողմանի, իսկ գործնականում՝ ապակողմնորոշող ընկալում է: Այստեղ շոշափվում է տնտեսական աճի և զարգացման փոխհարաբերության հարցը: Տնտեսական աճը և զարգացումը ունեն ինչպես ընդհանրություն, այնպես էլ տարբերություն: Ընդհանրության տիրույթում տնտեսական աճը և զարգացումը, որպես կանոն, դրսևորվում են համընթաց կերպով՝ լինելով մասի և ամբողջի փոխազդեցության մեջ, իսկ տարբերությունները կարող են հակադրվել: Զարգացումն ավելի տարողունակ, բազմաշերտ ու խորքային բովանդակություն ունի, քան տնտեսական աճը: Հետևաբար, նաև դրանով պայմանավորված, զարգացման հետ պետք է շաղկապել նպատակադրումները, իսկ տնտեսական աճի հետ՝ դրանց իրագործումը: Այս իմաստով, զարգացումը և տնտեսական աճը «նպատակ-միջոց» փոխհարաբերության մեջ են:

Տնտեսական աճը կարող է ընթանալ նաև առանց զարգացման: Դա վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տնտեսական աճը այս կամ այն ձևով ու չափով շեղվում կամ խզվում է զարգացման խնդիրներից ու չափանիշներից՝ հակադրվելով դրա բուն տրամաբանությանը: Նման հակազարգացումային դրսևորումներ են տնտեսական աճի պայմաններում եկամուտների ու հարստության

անհավասարության ծայրաստիճան խորացումը, միջին խավի թուլացումը, աղքատության մեծ չափերով ծավալումը, գործազրկության տևական ու զանգվածային բնույթը, տարածաշրջանային անհամամասնությունների սրումը, բնամիջավայրային դեգրադացումը և այլն:

Այսպիսով՝ տնտեսական աճը կարող է ինչպես համատեղվել, այնպես էլ չհամատեղվել զարգացման հետ: Ըստ որում, տնտեսական աճը զարգացման եզակի ուղի կամ պարտադիր նախադրյալ չէ: Դա նշանակում է, որ որոշակի պայմաններում զարգացումը կարող է տեղի ունենալ, մասնավորապես՝ նաև կառուցվածքային առաջադիմական տեղաշարժերի, սոցիալական բարելավումների, ինստիտուցիոնալ արդիականացման և շաղկապված համանման ձևերով: Առանց էական աճի զարգացումը ոչ միայն հնարավոր է, այլև ապագայում կարող է դառնալ անհրաժեշտ:

Առաջադրելով զարգացման համատեքստում տնտեսական աճի որակի ուսումնասիրության և գնահատման մոտեցումը՝ պետք է անդրադառնալ զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի ռազմավարության հիմնադրույթներին: Անհրաժեշտ է տնտեսական աճի արդյունքները փոխակերպել զարգացման նախադրյալների, հակառակ դեպքում՝ այն ինքնաբերաբար տեղի չի ունենա: Մյուս կողմից՝ իրական զարգացումը որակյալ տնտեսական աճի ապահովման և ինքնապահպանման, թերևս, ամենահիմնավոր ուղին է:

Զարգացման հաջորդ մեկնաբանությունն առնչվում է մարդկային ներուժի ձևավորման, լիարժեք օգտագործման, պահպանման և իրացման առաջնահերթ խնդիրների լուծմանը: Սա զարգացման էության ընկալման շրջադարձային փոփոխություն է, ըստ որի՝ զարգացման ավանդական պատկերացումը փոխարինվել է մարդկային զարգացման հայեցակարգով: Մարդկային ներուժի զարգացումը նաև ինքնին նպատակ է, սակայն վճռորոշ դեր ունի երկարաժամկետ տնտեսական աճի հնարավորության ստեղծման ու դրա իրականացման մեջ: Հետևաբար՝ զարգացման հետ համատեղելի տնտեսական աճը մեծապես պայմանավորված է սոցիալական գործոններով: Այդ առումով, հատկապես կարևոր են մասնագիտական կրթության համալիրը, զբաղվածության հնարավոր

րությունները, պայմանները և երաշխիքները, առողջապահության համակարգը, բնակարանային ապահովությունը:

Զարգացումը նպաստում է որակյալ տնտեսական աճին նաև մի շարք այլ ուղղություններով: Մասնավորապես՝ գիտության նվաճումները և դրանց հանրագուտ կիրառումը դրսևորվում են նոր բարիքների, տեխնոլոգիաների, նյութերի և այլ ձևերով: Այս իրողությունը նշանակում է, որ ստեղծվում են տնտեսական աճի նոր ուղղություններ և հնարավորություններ, որոնց իրացման շնորհիվ կազմավորվում են արտադրության նոր ճյուղեր, նոր շուկաներ կամ դրանց հատվածներ: Դրանք հագեցման աստիճանի մոտեցնելը կարող է պահանջել տևական ժամանակ, որի ընթացքում համապատասխան նոր պահանջմունքների բավարարման մղումը հանգեցնում է աճի նոր բևեռների դինամիկ ծավալման: Եթե նկարագրված գործընթացը որևէ մի պարբերաշրջանով չի ավարտվում, այլ շարունակական է, քանի որ միևնույն ժամանակամիջոցում սկսվում է նմանատիպ մեկ ուրիշ շրջափուլ, ապա այն նորամուծական զարգացման տիպիկ դրսևորում է:

#### **4. Հասարակության և տնտեսակարգի տիպային հատկանիշները որպես տնտեսական աճի որակը կանխորոշող գործոն**

Չնայած անվանմանը, տնտեսական աճը բացառապես տնտեսական երևույթ չէ: Այն մշտապես ընթանում է ավելի բազմաշերտ միջավայրում՝ բնական, սոցիալական և տեխնոլոգիական որոշակի պայմաններում: Այդ միջավայրը հարափոփոխ է, ինչը բացատրվում է նշված պայմանների փոխազդեցությամբ ու փոփոխություններով: Ըստ որում՝ տնտեսական աճը զգայուն է ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական (արտատնտեսական) պայմանների նկատմամբ: Բավական է նշել քաղաքական (ներքին և արտաքին), սոցիալական, բնական, մշակութային, ինստիտուցիոնալ, ժողովրդագրական, ազգային հոգեբանական միջավայրերի անուղղակի, բայց նշանակալից ազդեցությունը տնտեսական դինամիկայի վրա:

Տնտեսական աճի որակական բնութագրերը մեծապես կախված են հասարակության և տնտեսական համակարգի տիպային

հատկանիշներից: Մի դեպքում՝ դրանք նպաստում են երկարաժամկետում կայուն տնտեսական աճին, մյուսում՝ դրա ճանապարհին հարուցում տարաբնույթ խոչընդոտներ: Հետևաբար՝ հրատապ է այն հարցը, թե որ տիպի հասարակությունը և տնտեսական համակարգն են առավել նպատակահարմար զարգացման հետ համատեղելի տնտեսական աճի համար:

Նախ՝ հակիրճ անդրադառնանք տնտեսական աճի տեսություններին ու մոդելներին: Տնտեսագետներն առավելապես դիտարկում են դա որպես մակրոտնտեսական երևույթ՝ սահմանափակվելով հիմնականում անմիջաբար մասնակցող տնտեսական գործոնների ուղղակի ազդեցության կարևորումով ու դրա չափի գնահատումով: Այդպիսի մոտեցումն ակնառու է հատկապես ագրեգացված արտադրական ֆունկցիաներում: Լավագույն դեպքում, դրանք ընդհանրական ձևով նկարագրում են որոշակի առնչություններ և համամասնություններ: Մեթոդաբանորեն այդպիսի ագրեգացումը խնդրահարույց է, քանի որ ներառվող պարամետրերը միկրոմակարդակում բազմազան են, ոչ այնքան համադրելի և այլն: Այսպես՝ ագրեգացված արտադրական ֆունկցիան կարող է տպավորություն ստեղծել, որ ամբողջական մակրոմիավորի մասշտաբով համաչափ տնտեսական աճ է արձանագրվում: Բացի այդ, դրանում ուղղակիորեն չեն «մասնակցում» պետության տնտեսական քաղաքականության, մասնավորապես՝ միջամտության ձևերի ու չափերի, կարգավորման փոփոխությունները, ինչպես նաև տնտեսական աճի համար որոշիչ ձեռնարկատիրական գործունեության տարբեր բնութագրերը: Իսկ անուղղակի ձևով դրանք ավելի շուտ արտահայտվում են թողարկված համախառն արդյունքի մեջ՝ գործարար ակտիվությունը բնութագրելով ex post, քան ex ante, ընդգրկվելով առաջարկի գործոնների կազմում: Այդուհանդերձ, դրանք մշակվել են և տեղին են զարգացած երկրների համար, որտեղ ինստիտուցիոնալ միջավայրը սկզբունքորեն կայացած է և նպաստավոր տնտեսական աճի համար: Սակայն չի բացառվում, որ մակրոտնտեսական դինամիկայի մոդելների թույլ տեղերը բացահայտվեն իրական միտումներից խզումով և կանխատեսման ձախողումներով, ինչը դրդում է վերանայել ավանդական մոտեցումը, կատարել լրամշակումներ, կիրառել այլ գաղափարներ:

Տնտեսական աճի ստանդարտ մոդելների գործնական նշանակությունը էապես նվազում է հետամնաց, չզարգացած, թերզարգացած և զարգացող երկրների համար: Դրա հիմնապատճառն այն է, որ այդ երկրներում առկա իրողությունները բուրրովին ուրիշ են: Այստեղ զարգացման ռազմավարության ելակետ կարող է լինել տնտեսական աճի ներուժի ստեղծման և իրացման համար պահանջվող միջավայրի ձևավորումը: Իհարկե, զարգացած երկրների փորձն ուսանելի է, քանի որ դրանում արտացոլվում են նաև զարգացման ընդհանուր օրինաչափությունները, սակայն անհրաժեշտ է ամբողջականության մեջ այն խորությամբ վերլուծել, ճիշտ իմաստավորել և հիմնավորապես տեղայնացնել: Մեխանիկական մասնակի նմանակումների դեպքում անհամեմատ բարձր է ձախողման, քան հաջողության հավանականությունը:

Իրականում տնտեսական աճն ընթանում է ոչ թե տեսական «դեղատոմսերով», այլ գործնական տրամաբանությամբ, տատանումների և նույնիսկ վայրկյանների էվոլյուցիոն ճանապարհով: Տեսությունները և մոդելներն առավելագույնը բացատրում են տնտեսական աճն ու դրա դինամիկան ընդհանուր գծերով, մեծավ մասամբ՝ հետահայաց, ներկա և «եթե, ապա» մոտեցումներով, ինչպես նաև առաջարկում են խորհրդատվություն տնտեսական քաղաքականության նախընտրելի միջոցառումների վերաբերյալ: Դրանք բավարար ճշտությամբ ու կոնկրետությամբ չեն կանխատեսում գործոնների ընթացիկ ազդեցությունը, վերջնարդյունքները և առանձնապես՝ հնարավոր դանդաղումը, ընդհատումը և անկումը տարբեր շոկերի ազդեցությամբ, ինչպես նաև վերականգնողական աճի տևողությունը և հետագա աճի հեռանկարները:

Այս պայմաններում նպատակահարմար է խուսափել տնտեսական աճի ուսումնասիրության մեջ մակրոտնտեսական մոտեցման բացարձակացումից՝ այն համարելով միկրոմակարդակի գործընթացների վերլուծությամբ: Այստեղ էական է այն հիմնահարցը, թե ինչպես է ընթանում աճը միկրոմակարդակում, ինչպես է կատարվում դրանց ազդեցումը, այսինքն՝ ինչ պատկեր է բացահայտվում տնտեսական աճի միկրոտնտեսական հատույթով: Այս տեսանկյունից պարզ է, որ տնտեսական աճն ունի միկրոտնտեսական հիմքեր ու աղբյուրներ, որոնցից կախված է: Դա նշանակում է՝

տնտեսական աճը մեծաթիվ ու տարաբնույթ միկրոդինամիկաների հավաքական արդյունքն է: Տվյալ մոտեցումը թույլ է տալիս համարժեքորեն արտացոլել այն իրողությունը, որ իրական աճը ամենևին համաչափ չէ, ըստ որում, ոչ միայն տարբեր տեմպերի առումով, այլև քանի որ կոնկրետ միկրոդինամիկաների կտրվածքով լինում են աճի, անփոփոխ մնացող և կրճատման դրսևորումներ: Դա նաև նշանակում է, որ միկրոսուբյեկտները հիմք ունեն իրենց տնտեսական կարգավիճակը և դրա փոփոխությունը գնահատելու՝ ոչ այնքան ազդեցացված դինամիկայից, որքան ուղղակիորեն իրենց սեփական միկրոդինամիկայից ելնելով:

Քննարկվող մոտեցումն օժտված է նշանակալից առավելությամբ՝ տնտեսական աճի խթանման ու կարգավորման քաղաքականությունը բխեցնել գործարար միջավայրի կարգաբերման և բարելավման հիմնախնդրից: Դրա լուծման տիրույթում ներառվում են ինչպես անհարկի սահմանափակումների, խտրական անհավասարության պայմանների և խոչընդոտների հաղթահարումը, այնպես էլ նպաստող ու խթանող կարգավորումների կատարումը: Այս հարցում հաջողության հասնելու ծանրակշիռ երաշխիք կարող է լինել հետևյալ ուղեցույցի ընդունումը. գործարար միջավայրի բազմապիսի պայմանների մի խմբի մասնակի բարելավումը դեռևս չի նշանակում խնդրի սկզբունքային լուծում, քանի որ այդ պայմանները համատեղ կազմավորում են հավաքածու և սուբյեկտների կողմից ընկալվում են որպես փոխլրացնող: Դա նշանակում է, որ միայն ամբողջության մեջ դիտելիս է վերջնականորեն պարզվում պայմանների նպաստավոր կամ աննպաստ լինելը. այսպես՝ եթե մի շարք կարևոր պայմաններում նույնիսկ զգալի բարելավում կատարվի, սակայն որոշ պայմաններ էլ պահպանեն չհաղթահարված արգելքի կարգավիճակը, ապա ընդհանուր իրադրությունը, փաստորեն, էականորեն չի փոխվի:

Տնտեսական աճի որակի իմաստով առավել բարձր ստանդարտներ ապահովում են այն երկրները, որոնք ձևավորում ու զարգացնում են ազատ ձեռնարկատիրության բաց, մրցակցային և արդյունավետ համակարգ: Դա տեղի է ունենում իրավական պետության և շուկայական մեխանիզմի գործառույթների համապատասխան «դերաբաշխման», դրանց համադրման, ինչպես նաև

պատշաճ կատարման շնորհիվ: Իհարկե, տևական, տպավորիչ տնտեսական աճ արձանագրվել է նաև վարչահրամայական տնտեսակարգում, սակայն դա առավելապես էքստենսիվ աճ է՝ այլընտրանքներին բազմակի զիջելով իր որակական բնութագրերով:

Տնտեսական աճի գործոնների, ընթացքի և որակական արդյունքների առումով կան նշանակալից տարբերություններ առանձին տնտեսակարգերի և ազգային տնտեսության տիպային մոդելների միջև, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ներքին դինամիկայի տիրույթում: Միաժամանակ, առկա է ընդհանրություն՝ ֆունկցիոնալ տեսակետից գործում են միևնույն միջնորդավորող մեխանիզմները: Դրանցից հատկապես որոշիչ են՝

- ա) պետության մասնակցությունը նախորդ դարակեսից հետո արձանագրված բոլոր «տնտեսական հրաշքներում» պետական քաղաքականությանը, դրա կազմակերպող, համախմբող, աջակցող և ուղղորդող ծանրակշիռ դիրքորոշումը,
- բ) առողջ ձեռնարկատիրական ոգին՝ առարկայացած հանրօգուտ արտադրողական գործունեության հարաճուն արդյունքներում,
- գ) իրական մասնավոր ներդրումները՝ ծավալը, դինամիկան, ուղղությունները, կուտակման նորման և այլն,
- դ) խնայողությունների դրդապատճառները, աղբյուրները, չափերը, դրանք ներդրումների փոխակերպելու եղանակները,
- ե) գիտական և տեխնոլոգիական դինամիկ նորամուծությունները, դրանց հանդեպ գործարար հատվածի ընկալունակությունը, կիրառման ու տարածման հակումը,
- զ) աշխատողների մասնագիտական որակավորման մակարդակը, արդյունավետ և բարձր զբաղվածությունը, մանավանդ՝ որպես ներգրավող, մասնակցային տնտեսական աճի (inclusive growth) նախադրյալ ու երաշխիք,
- է) ամբողջական պահանջարկի և դրա առանձին բաղադրիչների խթանիչ ներուժի օգտագործումը, ըստ այդմ՝ արդյունավետ մեծության ապահովումը:

### 5. Տնտեսական աճի որակի չափանիշների շուրջ

Տնտեսական աճի որակի հիմնական բաղադրիչները, միաժամանակ, կարող են ունենալ չափանիշի կարգավիճակ, կամ տվյալ բաղադրիչից կարելի է բխեցնել ու ձևակերպել համապատասխան

չափանիշը: Ուստի, խուսափելով կրկնությունից, քննարկենք տնտեսական աճի որակի գնահատման մյուս չափանիշները:

Բազմակողմանի բնույթի չափանիշ է ծախս-օգուտ վերլուծության կիրառումը: Տնտեսական աճը նույնպես անհրաժեշտ է ներգրավել նշված շրջանակի մեջ, քանի որ այն ունի ոչ միայն օգուտներ, այլև համապատասխան ծախսային բեռ, որոնց համադրումը ցույց է տալիս տվյալ աճին հասնելու գինը: Տնտեսական աճի որակն ապահովվում ու հետագայում բարձրանում է այն դեպքում, երբ նախ՝ ստացվում են զուտ օգուտներ, ապա դրանք մեծանում են:

Տնտեսական աճի որակի հաջորդ չափանիշը շաղկապված է բնապահպանական գործոնին՝ սկսած աճի գործընթացում կլանվող, սպառվող բնական պաշարներից մինչև բնության աղտոտումը և կլիմայի անտրոպոգեն (մարդածին) վատթարացումը: Այս ամենի հետևանքով քայքայվում է կենսամիջավայրը՝ ոչ միայն նվազեցնելով բարեկեցությունը, այլև ահազանցնելով գոյապահպանմանն ուղղված սպառնալիքը: Վերջինիս թուլացման, հետագայում՝ չեղքացման հնարավորությունը շաղկապվում է, այսպես կոչված, «կանաչ տնտեսությանը», «կանաչ զարգացմանը» կամ «կանաչ աճին»: Այն ենթադրում է բնապահպանական բարձր գիտակցության կիրառում՝ բնության գիշատչական շահագործման բացառում, մասնավոր հատվածական շահերի նկատմամբ հանրային շահի առաջնայնության ապահովում, հումքի մեծաքանակ արտահանման փոխարեն, առավելապես դրա վերամշակման արտադրությունների կազմակերպում: «Կանաչ աճի» կարևորությունն ավելի կմեծանա որպես աճի որակի բարելավման անհրաժեշտ ուղի:

Տնտեսական աճի որակի վերլուծությանն ուղղակիորեն առնչվող մյուս հիմնախնդիրը վերաբերում է արտադրողականության ցուցանիշների վիճակին ու դինամիկային: ՀՀ վիճակագրական տարեգրքերը ներառում են ՀՆԱ դինամիկ շարքերը և բազում այլ տվյալներ, սակայն չեն պարունակում աշխատանքի արտադրողականության ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ ըստ ճյուղերի ցուցանիշները: Միգուցե եղած տվյալներով կարելի է դրանք հաշվարկել, սակայն անհրաժեշտություն կա, որ ՀՀ ԱՎԾ-ը վերականգնի

### 3. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

նշված ցուցանիշների վիճակագրական հաշվառումը և հրապարակումը, ինչը նախկինում մեծապես կարևորվել է:

Տնտեսական աճի որակի բարելավման մեջ որոշիչ է գիտատեխնիկական նորամուծությունների կատարումը: Այդ իմաստով, որակի կարևոր չափանիշներից է դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ում, ինչպես նաև դրա հավելածուն: ՀՆԱ-ում գիտատեխնիկական աշխատանքների ծավալի չափազանց փոքր հարաբերական ցուցանիշը վկայում է, որ գիտական արդյունքի նկատմամբ պետական ու գործարար հատվածների պահանջարկը չափազանց թույլ ու անբավարար է: Դա նշանակում է նաև, որ պատշաճ չի ձևավորվում և իրացվում է ներդրում (ներծին) աճի ներուժը, որի նշանակալից առանձնահատկություններից մեկը մասշտաբի աճող հատույցի հնարավորության ընձեռումն է: Թեկուզ ժամանակավոր լինելու դեպքում այն կարող է էապես բարձրացնել թողարկման և դրա ընդլայնման որակական ցուցանիշները:

Տնտեսական աճի որակի բնութագրման համար կարևոր միջազգային համեմատությունների դինամիկ կտրվածքով պարբերական կատարումը հնարավորություն կտա դիտարկելու քանակական փոփոխություններից որակականի անցման օրինաչափ գործընթացի փուլերը: Այսպես՝ կարելի է առանձնացնել մի շարք համադրումներ, մի կողմից՝ տվյալ երկրի բացարձակ ու հարաբերական ցուցանիշների (ՀՆԱ ծավալ, մարդաշնչի հաշվով մեծություն, աճի տեմպեր և այլն), մյուս կողմից՝ տարածաշրջանային, համաշխարհային, այս կամ այն դասակարգմամբ տարբերակված երկրների խմբերի, ինչպես նաև ԱՊՀ, մերձբալթյան, արևելաեվրոպական երկրների համանուն ցուցանիշների միջև: Մասնավորապես՝ համաշխարհային թողարկումը մեկ մարդու հաշվով կազմում է 10 հազ. դոլար (70 տրլն գլոբալ ՀՆԱ և 7 մլրդ բնակչության դեպքում): Վերջերս Հայաստանը մարդաշնչի ցածր եկամտով երկրների խմբից անցել է միջին եկամտով երկրների ստորին տիրույթ, սակայն դեռևս զգալիորեն զիջում է նշված տվյալին: Այդ առումով, համեմատության տրամաբանությունն այն է, որ պարզվի՝ դինամիկայում արդյոք կրճատվում, թե մեծանում են տարբեր երկրների ցուցանիշների միջև առկա խզման չափերը, և յուրաքանչյուր դեպքում դա ինչ արագությամբ է տեղի ունենում:

Այս ուղղության շրջանակներում 1990-2012 թթ. համար իրականացվել է հանրապետության տնտեսական զարգացման՝ տնտեսական աճի դինամիկայի և տնտեսության ճյուղային կառուցվածքի համապարփակ վերլուծություն:

Դիտարկվել են դեռևս ՀՀ անկախությանը նախորդող տարիներին (1988-1990 թթ.) բնորոշ մի շարք իրողություններ՝ երկրաշարժ, ազատագրական շարժում, դրանց հետ կապված՝ քաղաքական անկայուն իրադրություն և այլն, որոնք պայմանավորել էին հանրապետությունում տնտեսական զարգացման տեմպերի նվազում, իսկ արդեն 1990 թ. տնտեսական անկում (իրական ՀՆԱ-ն կազմեց նախորդ տարվա 94.5%-ը): 1991 թ. տնտեսական, քաղաքական, սոցիալական խնդիրներն էլ ավելի խորացրին անկումը, որը շարունակվեց մինչև 1994 թ.:

1990-1994 թթ. հանրապետության իրական ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան 53%-ով (աղյուսակ 1): Իրական ՀՆԱ ծավալի ամենամեծ անկումը արձանագրվել է 1992 թ.՝ շուրջ 42%, որը ԱՊՀ երկրների նույն ցուցանիշը գերազանցել է ավելի քան 6 անգամ:

Տնտեսական անկումն այդ ժամանակահատվածում ուղեկցվել է ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման, խորացող էներգետիկ ճգնաժամի կասեցման, տնտեսության ճյուղերի մասնագիտացման փոփոխությունների, իրականացվող բարեփոխումների ուղղությունների ընտրության, պետականության կայացմանը խոչընդոտող ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը մեղմելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորմանն ուղղված իրավիճակային կառավարման բարդություններով: Այդ ժամանակաշրջանում հանրապետության տնտեսության վրա զգալի բացասական ազդեցությունն է ունեցել Խորհրդային Միության հանրապետությունների միջև գոյություն ունեցող կապերի՝ նախ թուլացումը, ապա առհասարակ խզումը:



ՀՆԱ արտադրությունը 1990-1998 թթ.<sup>12</sup>

		Ռուբլի					Դրամ				
		1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	
ՀՆԱ-ն	մլրդ.	10.1	16.0	62.5	853.1	187.1	522.3	661.2	804.3	955.4	
փաստացի գներով	մլն ԱՄՆ դոլար	-	-	323.7	492.2	643.3	1286.5	1597.0	1600.8	1885.4	
ՀՆԱ աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %		94.5	88.3	58.2	91.2	105.4	106.9	105.8	103.1	107.2	
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	հազ. ԱՄՆ դոլար	-	-	17.0	228.6	49.9	138.9	175.0	210.9	250.9	
				87.8	131.0	171.7	342.2	423.2	422.8	496.8	

1991–1994 թթ. ՀՆԱ անկումն ուղեկցվել է գների աննախադեպ աճով: Նշված ժամանակաշրջանում սպառողական գների ինդեքսն ըստ տարիների կազմել է՝ 1991 թ.՝ 274.1, 1992 թ.՝ 828.7, 1993 թ.՝ 1922.9, 1994 թ.՝ 5062.3<sup>13</sup>:

Տնտեսական անկումը կասեցվեց 1994 թ., և սկսվեց աշխուժացման փուլը: Տևական անկումից հետո (շուրջ հինգ տարի) 1994 թ. արձանագրվեց իրական ՀՆԱ աճ՝ 105.4%: Ընդհանուր առմամբ, 1994-1998 թթ. ՀՆԱ-ն աճել է 131.7%, իսկ միջին տարեկան աճը կազմել է 6.4%: Այդ ընթացքում հանրապետությունում ՀՆԱ աճը հիմնականում ապահովվել է տնտեսության բազային 5 ճյուղերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր) արտադրանքի և ծառայությունների ծավալների ավելացման հաշվին:

Պետք է նշել, որ 1998 թ. հանրապետության ՀՆԱ-ն հասել էր 1990 թ. ՀՆԱ ընդամենը 61%-ի մակարդակին: 1990-1998 թթ. ընթացքում հանրապետության տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն են թողել ազատական (շուկայական) տնտեսական հարաբերությունների կայացմանն ուղղված գործընթացները:

1990-1994 թթ. տնտեսական անկումը պայմանավորել է նաև ՀՆԱ անկումը բնակչության մեկ շնչի հաշվով: Այդ ցուցանիշի աճ արձանագրվել է սկսած 1994 թ.: 1995-1998 թթ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ միջին տարեկան աճը ԱՄՆ դոլարով կազմել է 13.7%, իսկ դրամով՝ 22.5%: 1998 թ. ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով, կազմել է 251 հազ. դրամ կամ 496.9 ԱՄՆ դոլար:

**1. ՀՆԱ օգտագործումը 1990-1998 թթ.**

1990-1998 թթ. հանրապետությունում ստեղծված արդյունքն օգտագործվել է ապրանքների ու ծառայությունների վերջնական սպառման, հիմնական ֆոնդերի համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների համալրման նպատակով: Հարկ է նշել, որ 1988 թ. հետո հանրապետությունը սպառում էր ավելի շատ, քան արտադրում էր:

1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով հանրապետությունը կորցրեց ավելի քան 1.5 մլրդ ռուբլու ազգային եկամուտ, ինչի հետևանքով պաշարների սպառումը գերազանցեց արտադրված ազգային եկամուտն ավելի քան 14%-ով:

Նշված ժամանակաշրջանում վերջնական սպառման զգալի մասը կազմել է տնային տնտեսությունների ծախսերն ապրանքների և ծառայությունների սպառման վրա: Դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում 1997 թ. կազմել է 104.4%, այն դեպքում, երբ 1990 թ. այն եղել է 48.6%: Տնային տնտեսությունների կողմից ապրանքների և ծառայությունների սպառման զգալի աճն ապահովվել է ներմուծման հաշվին: Եթե ներմուծումը 1990 թ. կազմել է ՀՆԱ 46%, ապա 1994 թ.՝ արդեն 73%, 1995 թ.՝ 62%, 1997 թ.՝ 59% և 1998 թ.՝ 52%: Ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում սկսել է նվազել 1995 թ., ինչը վկայում է տնտեսության մեջ դրական տեղաշարժերի մասին:

1993-1998 թթ. իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումները, որոնց մեջ հարկ է առանձնացնել 1993 թ. սեփական դրամական միավորի ներդրումը և դրանով պայմանավորված՝ ինքնուրույն դրամավարկային քաղաքականության իրականացման հնարավորությունները, բանկային համակարգի նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, հարկային քաղաքականության և վար-

<sup>12</sup> Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998 թթ., [www.armstat.am/file/article/tntbar/91\\_98i](http://www.armstat.am/file/article/tntbar/91_98i)

<sup>13</sup> Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997 թթ., [www.armstat.am/file/article/azghashiv\\_90\\_97\\_.pdf](http://www.armstat.am/file/article/azghashiv_90_97_.pdf)

չարարության կատարելագործման փորձերը, նոր արտաքին տնտեսական կապերի ձևավորումը, առաջին փուլի սեփականաշնորհման ավարտը: Քաղաքական համակարգի էական կայունացումը և հրադադարը զգալիորեն նպաստեցին 1991-1994 թթ. ճգնաժամի հետևանքների հաղթահարմանն ու տնտեսության վերականգնմանը:

## 2. Տնտեսական աճը 1999-2012 թթ.

1998-2001 թթ. ՀՀ տնտեսության համար կարելի է բնորոշել որպես համեմատաբար ցածր, սակայն աճող տեմպերով տնտեսական աճի ժամանակաշրջան, իսկ արդեն 2002 թ. տնտեսությունը մտել է երկնիշ աճի փուլ, որը տևել է մինչև 2007 թ. (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՆԱ արտադրությունը 1999-2012 թթ.<sup>14</sup>

	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
ՀՆԱ մլրդ դրամ	987.4	1031.1	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2656.2	3149.2	3568.2	3102.8	3509.6	3776.4	3997.6
ՀՆԱ մլն ԱՄՆ դոլար	1912.2	1911.5	2118.4	2376.3	2807.1	3576.6	4900.4	6364.5	9204.5	11662	8541.1	8625	10138.1	9950.2
ՀՆԱ իրական աճի տեմպ	103.3	105.9	109.6	112.9	114	110.5	113.9	113.2	113.7	106.8	85.8	102.6	104.7	107.2
ՀՆԱ դեֆլյատոր	100.1	98.7	104.1	102.3	104.6	106.3	103.2	104.6	104.1	108.5	101.3	110.2	104.2	98.4

Երկնիշ աճի ժամանակահատվածում տնտեսության միջին տարեկան աճը կազմել է 13.1%, ինչի արդյունքում 2007 թ. ՀՆԱ-ն իրա-

<sup>14</sup> Հայաստանի ազգային հաշիվները 2010 թ., [www.armstat.am/file/article/hah\\_10\\_2\\_pdf](http://www.armstat.am/file/article/hah_10_2_pdf)

կան արտահայտությամբ գերազանցել է 2002 թ. մակարդակը 84.8%-ով: 2007 թ. ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) կազմել է մոտ 9.2 մլրդ ԱՄՆ դոլար: Պետք է նշել, որ ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՆԱ-ն 2007 թ. մոտ 3.9 անգամ գերազանցում էր 2002 թ. և մոտ 5.7 անգամ՝ 1997 թ. մակարդակը: Այս հանգամանքը, իհարկե, զգալիորեն պայմանավորված է 2004-2008 թթ. ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի կտրուկ արժևորմամբ՝ շուրջ 55%:

2007 թ. Հայաստանում ՀՆԱ-ն արդեն 47%-ով գերազանցում էր 1989 թ. մակարդակը<sup>15</sup>: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանում երկնիշ տնտեսական աճի տեմպերը 2008 թ. ընդհատվեցին՝ եթե 2008 թ. սկզբում տնտեսության աճի բարձր տեմպերը նվազեցին (2008 թ. տնտեսական աճը կազմեց ընդամենը 6.8%, և սա այն դեպքում, երբ տնտեսական անկում գրանցվեց միայն հոկտեմբերին՝ սեպտեմբերի համեմատ 8.3%<sup>16</sup>), ապա հետագայում տնտեսական երկնիշ աճը վերածվեց մեծ անկման՝ 2009 թ. երկրում գրանցվեց 14.2% տնտեսական անկում (աղյուսակ 2):

2010 թ. նկատվեց որոշակի աշխուժացում և արձանագրվեց իրական ՀՆԱ աճ՝ 2.6%: Հետագայում՝ 2011-2012 թթ. տնտեսական աճի տեմպերն արագացան՝ կազմելով համապատասխանաբար՝ 4.7% և 7.2%: Միևնույն ժամանակ, 2012 թ., 2011 թ. համեմատությամբ դրամն արժեզրկվեց շուրջ 8% (ավելի, քան իրական տնտեսական աճը), ինչի հետևանքով ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՆԱ-ն 2011 թ. շուրջ 10.2 մլրդ դոլարից 2012 թ. նվազեց մինչև 9.9 մլրդ:

2000-2012 թթ. ընթացքում ՀՀ տնտեսությունը ենթարկվել է զգալի կառուցվածքային փոփոխությունների՝ պայմանավորված տնտեսության երեք հիմնական ճյուղերում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն և կապիտալ շինարարություն, արձանագրված կառուցվածքային տեղաշարժերով:

<sup>15</sup> Հաշվարկներն իրականացվել են տարեկան աճի ցուցանիշների հիման վրա, տե՛ս նաև EBRD Transition Report Update, May 2007:

<sup>16</sup> ՀՀ ԱՎԾ, Հրապարակումներ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականի հունվար-հոկտեմբերին». Մակրոտնտեսական ցուցանիշներ, [http://www.armstat.am/file/article/sv\\_10\\_08a\\_0.pdf](http://www.armstat.am/file/article/sv_10_08a_0.pdf)

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսության երկու հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության տեսակարար կշիռները ՀՆԱ մեջ անընդհատ նվազել են: Այսպես՝ եթե 2000-2004 թթ. դրանք միասին ապահովել են ՀՆԱ շուրջ 45%, ապա 2008 թ. այդ ցուցանիշը հասել է մոտ 30%<sup>17</sup>: Իրավիճակը այլ է կապիտալ շինարարության դեպքում՝ 2000-2008 թթ. ընթացքում ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ անընդհատ աճել է, և արդեն 2008 թ. այն ապահովել է ՀՆԱ ավելի քան 1/4-ը: Հետագա տարիներին այն դարձյալ նվազել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով:

Նշված ժամանակահատվածում տնտեսության մյուս ճյուղերի (առևտուր և հանրային սնունդ, տրանսպորտ և կապ ու այլ ճյուղեր) տեսակարար կշիռները ՀՆԱ մեջ համեմատաբար կայուն են մնացել:

Հետճգնաժամային փուլում՝ 2010-2012 թթ. արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը (հատկապես՝ գյուղատնտեսությունը, իսկ արդյունաբերության մեջ՝ հանքարդյունաբերությունը) ունեցել են աճի բավականին բարձր տեմպեր, և արդեն 2012 թ. ապահովել են ՀՆԱ շուրջ 37%: Իսկ շինարարության ճյուղում դեռևս անկումը չի կասեցվել, և սկսած 2008 թ. դրա տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ անընդհատ նվազում է:

2001-2012 թթ. տնտեսական զարգացման ընթացքը պայմանավորել են նաև բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակի համապատասխան փոփոխությունները:

Պետք է նշել, որ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ դինամիկայի վրա զգալի ազդեցություն են ունեցել դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումները: Եթե մեկ շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ն 2007 թ., 2001 թ. համեմատությամբ աճել է մոտ 2.6 անգամ, ապա ԱՄՆ դոլարով աճը կազմել է ավելի քան 4.2 անգամ: Այս անհամապատասխանությունը սկսել է նվազել արդեն 2008 թ.՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ՀՆԱ կրճատմամբ և դոլարի արժևորմամբ: Արդյունքում 2009 թ. Հայաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 2633 ԱՄՆ

դոլար, ինչը շուրջ 1000 դոլարով կամ 26.2%-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Հետագայում՝ 2010-2012 թթ., մեկ շնչի հաշվով ՀՆԱ փոփոխությունները տեղի են ունեցել տնտեսական աճի տեմպերին համահունչ:

### 3. ՀՆԱ օգտագործումը 2000-2012 թթ.

2000-ից մինչև 2002 թ. շարունակվել է դեռևս 1995 թ. սկսված՝ ՀՆԱ նկատմամբ սպառման գերազանցման միտումը, սակայն տարեցտարի այն անընդհատ նվազել է, և արդեն 2002 թ. վերջնական սպառումը գրեթե հավասարվել է ՀՆԱ մակարդակին (սպառումը կազմել է ՀՆԱ 99.1%-ը): Հետագա տարիներին (մինչև 2008 թ.) սպառումը ՀՆԱ-ի նկատմամբ անընդհատ նվազել է՝ հասնելով՝ 81.8%<sup>18</sup>: 2009-ից սկսած, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով, ընդհանուր սպառման տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ դարձյալ սկսել է աճել և արդեն 2012 թ. նորից գերազանցել է ՀՆԱ մակարդակը՝ կազմելով 101.8%: Պետք է նշել, ընդհանուր սպառման տեսակարար կշիռի նվազումն ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր սպառման տեսակարար կշիռի կրճատմամբ:

Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան բարձր տնտեսական աճի ժամանակահատվածում (2002-2007 թթ.) անընդհատ աճել է, ինչը պայմանավորվել է ՀՆԱ աճը գերազանցող ներդրումների աճով: 2008 թ. ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը հասել է առավելագույն՝ 40.9% մակարդակի, որից հետո սկսել է նվազել և 2012 թ. հավասարվել է 2002-2003 թթ. մակարդակին՝ 23.9%:

Անկախ Հայաստանի պատմության ամբողջ ընթացքում ներմուծումը մշտապես գերազանցել է արտահանումը: Արտաքին առևտրի բացասական մնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ 2000-2005 թթ. ընթացքում կրճատվել է գրեթե երկու անգամ՝ 27.2%-ից հասնելով 14.4%, ինչը պայմանավորվել է ներմուծման աճի նկատմամբ արտահանման առաջանցիկ աճով: Սակայն 2006-2009 թթ. արտաքին առևտրի բացասական մնացորդը ՀՆԱ-ի մեջ նորից սկսել է

<sup>17</sup> ԱՎԾ համապատասխան տարիների տարեգրքեր:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, [www.minfin.am/main.php.lang/macroid&iseng](http://www.minfin.am/main.php.lang/macroid&iseng)

մեծանալ, և 2009 թ. զուտ արտահանում/ՀՆԱ ցուցանիշը գրեթե հավասարվել է 2000 թ. մակարդակին՝ -27.9%: 2010 թ. այն նորից սկսել է նվազել և 2012 թ. կազմել է -24.3%:

Այսպիսով՝ եթե անկախացումից հետո ՀՀ տնտեսական աճի դինամիկան դիտարկենք՝ բաժանելով երկու ժամանակահատվածների՝ 1991-2000 թթ. և 2001-2012 թթ., ապա առաջին փուլի համար կարելի է փաստել, որ հանրապետության տնտեսական զարգացման տեմպերն ու առանձնահատկությունները պայմանավորված են եղել տնտեսության վերափոխումներով, դրա հետ կապված՝ ճգնաժամային իրավիճակների հաղթահարման, նոր տնտեսական հարաբերություններին ու իրողություններին հարմարվելու, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում արմատական բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև ավերիչ երկրաշարժի և դրա հետևանքների վերացման, պատարագմի, դրանով պայմանավորված՝ երկու հարևան երկրների հետ տնտեսական հարաբերությունների բացակայության, շրջափակման, բազմաթիվ այլ տնտեսական և ոչ տնտեսական գործոններով:

Ինչ վերաբերում է 2000 թ. հետո ՀՀ տնտեսական զարգացման ընթացքին, ապա ակնհայտ է դառնում, որ ձևավորվել է տնտեսություն, որ ոչ միայն ի վիճակի չէ դիմակայելու համաշխարհային տնտեսական ցնցումներին (շոկեր), այլ նաև գնալով խորանում է ձևավորված ոչ օպտիմալ կառուցվածքը: Այս առումով, կարծում ենք, որ ժամանակի հրամայականն է նոր, համաշխարհային փոփոխվող պայմաններին համապատասխան, դեպի արտահանումը կողմնորոշված, նորարարությունների վրա հիմնված, կրեատիվ (ստեղծարար) տնտեսության ձևավորմանն ուղղված որոշակի և հասցեական քայլերի իրականացումը: Ընդ որում, եթե նշված ուղղություններով այսօր կոնկրետ գործողություններ չձեռնարկվեն, ապա վաղը դրանց իրականացումն առավել դժվար է լինելու:

#### **4. Պետական ծախսեր-տնտեսական աճ փոխազդեցությունը**

Այս ուղղության շրջանակներում հետազոտվել է պետական ծախսերի և տնտեսական աճի տեմպերի միջև առկա կապն ու դիտարկվել դրա դրսևորումն աշխարհի բազմաթիվ երկրներում: Ուսումնասիրվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող

երկրներում պետական ծախսեր/ՀՆԱ դինամիկան 1950-2015 թթ. (2015 թ. կանխատեսում), արձանագրելով, որ անխտիր բոլոր երկրներում, դիտարկվող ամբողջ ժամանակաշրջանում այն անընդհատ աճել է: Սա նշանակում է՝ մի կողմից, պետությունները, անընդհատ մեծացնելով պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, հետևողականորեն նպաստում են տնտեսության «պետության սահմանների» ընդլայնմանը: Ժամանակակից պայմաններում պետությունները շուկայում հանդես են գալիս, որպես խոշորագույն գնորդ, ինչը տնտեսության վրա հսկայական ազդեցության ռեսուրս է պարունակում, և կառավարությունները շահագրգռված են պետական ծախսերի անընդհատ աճի մեջ:

Մյուս կողմից, պետական ծախսերի բազմաթիվ տեսակներ իրականացվում են ոչ թե տարեկան, այլ երկարաժամկետ կտրվածքով՝ միջնաժամկետ կամ երկարաժամկետ ծախսային ծրագրերով, ուստի դրանք պահանջում են անընդհատ շարունակականություն, այլապես նախկինում կատարված ծախսերը կփոշիանան: Այդ պատճառով դրանց ընդհատումը կամ սահմանափակումը գործնականում հնարավոր չէ:

Ահա այդ պատճառով աշխարհի բոլոր երկրներում պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ անընդհատ մեծանում են և առանձին երկրներում նույնիսկ հասնում է 50-60%-ի սահմանը: Իսկ հետսոցիալիստական որոշ երկրների համար (Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս) արդեն կարելի է խոսել «պետական օլիգարխիկ կապիտալիզմի»<sup>19</sup> ձևավորման մասին, և նշված երկրներում առավել ուժեղ հակազդեցություն այս գործընթացներին կարող են լինել միայն ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ ուղղված հատկապես մասնավոր սեփականության և իրավունքների պաշտպանությանը, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության զարգացմանը:

Հայաստանի համար, այս առումով, իրավիճակն այլ է. նախ՝ պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ այդքան մեծ չէ, բացի դրանից, պետական սեփականությունը ՀՀ տնտեսության մեջ աննշան է, և պետական ձեռնարկությունների կամ պետական

<sup>19</sup> А. Радыгин, Р. Энтов, В поисках институциональных характеристик экономического роста (новые подходы на рубеже XX-XI вв). // Вопросы экономики, 2008, № 8.

բաժնեմաս ունեցող կազմակերպությունների թիվը փոքր է, հետևաբար՝ փոքր է նաև այդ կազմակերպությունների շահույթից բյուջե փոխանցվող մասը՝ ոչ հարկերի տեսքով: Այսինքն՝ Հայաստանի առումով «պետական կապիտալիզմի» ձևավորման մասին խոսելն իմաստ չունի կամ դեռ վաղ է:

ՀՀ պետական ծախսերի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

**ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները<sup>20</sup>**

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
<b>Պետ. բյուջեի ընդամենը ծախսեր մլրդ դրամ</b>	222.9	244.4	263.9	312.7	333.9	417.2	481.2	634.7	810.7	929.1	954.3	986.3	1006.1
<b>Պետ. ծախսեր/ՀՆԱ</b>	21.6	20.8	19.4	19.3	17.5	18.6	17.0	20.2	22.7	29.9	27.2	26.1	25.1
<b>Պետ. բյուջեի պակասուրդ/ՀՆԱ</b>	-4.9	-4.3	-2.6	-1.3	-1.7	-1.9	-1.5	-1.5	-0.7	-7.7	-4.9	-2.8	1.5


Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում պետական ծախսերը բացարձակ մեծությամբ անընդհատ աճել են նաև Հայաստանում և արդեն 2012 թ. գերազանցել են 2000 թ. մակարդակը շուրջ 4.5 անգամ: Նշենք, որ 2012 թ. ՀՆԱ-ն գերազանցում է 2000 թ. մակարդակը մոտ 3.9 անգամ:

Այսինքն՝ պետական ծախսերի գումարային աճը նույն ժամանակահատվածում ավելի մեծ է ՀՆԱ աճի համեմատ, սակայն այն, ըստ տարիների, անհամաչափ է եղել. աճի մեծ մասը բաժին է ընկնում 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին, այն դեպքում, երբ 2009 թ. արձանագրվել է ՀՆԱ կտրուկ անկում՝ 14.2%: Այնուամենայնիվ, նշված տասներկուամյա ժամանա-

<sup>20</sup> ՀՀ ԱՎԾ-ի տեղեկագրեր 2000-2012 թթ., <http://minfin.am/up/macroid/state%20budget.pdf>

կահատվածում գրեթե պահպանվել է տնտեսական աճի և պետական ծախսերի աճի տեմպերի համամասնությունը:

Պետական ծախսերի աճի տեմպերը    Տնտեսական աճի տեմպերը



**Գծապատկեր 1. Տնտեսական աճի և պետական ծախսերի աճի տեմպերի համամասնությունը**

**5. Տնտեսական աճի և պետական ծախսերի աճի տեմպերը ՀՀ-ում**

Տնտեսական աճի և պետական ծախսերի աճի տեմպերի այսպիսի դինամիկան տեսականորեն կարելի է մեկնաբանել որպես բնական և խիստ օրինաչափ երևույթ, ինչը նշանակում է՝ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում պետության «մասնակցությունը» տնտեսությանը՝ ծախսերի տեսքով, մեծացել է գրեթե այնքան, որքան «թույլ է տվել» տնտեսական աճը՝ հավաքագրվող հարկերի տեսքով: Սակայն առավել ամբողջական պատկերացումն կազմելու համար անհրաժեշտ է պարզել, թե որքան են պետական ծախսերը նպաստում տնտեսական աճին (աղյուսակ 4):

Ինչպես տեսնում ենք՝ տնտեսական աճին նպաստելու չափը դիտարկվող ամբողջ ժամանակաշրջանում ոչ միայն մեծ չէ (առավելագույնը 1.9%՝ 13.9% տնտեսական աճի պայմաններում, 2005 թ.), այլ նաև խիստ տատանողական բնույթ է կրել: Ընդ որում, ոչ պետական ծախսերի մեծությունը, ոչ տնտեսական աճի տեմպերը, ոչ պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը վճռորոշ ազդեցություն չեն ունեցել տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու ցուցանիշի դինամիկայի վրա: Նույնիսկ երկնիշ աճի ժամանակահատվածում՝ 2002-2007 թթ., առանձին տարիների տնտե-

սական աճին պետական ծախսերի նպաստելու չափը տատանվել է 0.2-1.9% միջակայքում:

Աղյուսակ 4

**Տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը<sup>21</sup>**

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՆԱ հավելածի տեմպ/տնտ. աճ	9.6	13.2	14	10.5	13.9	13.2	13.7	6.9	-14.1	2.2	4.7
Պետական ծախսերի հավելածի տեմպ	9.6	8.0	18.5	6.8	24.9	15.3	31.9	27.7	14.6	2.7	3.3
Տնտեսական աճին պետական ծախսերի նպաստման չափը <sup>22</sup>	0.5	0.2	1.4	1	1.9	1.5	0.5	-0.2	-0.1	0.5	0.3

Օրինաչափություն չի պահպանվել նաև պետական ծախսերի հավելածի տեմպի և տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը նկարագրող ցուցանիշների միջև: Այսպես՝ եթե 2003, 2005, 2006 թվականներին պետական ծախսերի հավելածի բարձր տեմպերը համապատասխանաբար՝ 18.5%, 24.9%, 15.3%, որոշակիորեն համապատասխանում են տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու բարձր ցուցանիշներին՝ 1.4%, 1.9%, 1.5%, ապա նույնը ասել չենք կարող 2007 թ. համար, երբ պետական ծախսերի հավելածի տեմպը ամենաբարձրն է եղել դիտարկվող ժամանակաշրջանում՝ 31.7%, որը տնտեսական աճին նպաստել է ընդամենը՝ 0.5%, այն դեպքում, երբ տնտեսական աճը 2007 թ. կազմել է շուրջ՝ 13.7%:

<sup>21</sup> ՀՀ ԱՎԾ-ի տեղեկագրեր 2001-2012 թթ.:

<sup>22</sup> Հեղինակի հաշվարկներ:

2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում պետական ծախսերը տնտեսական աճին «նպաստել են» բացասաբար՝ համապատասխանաբար՝ -0.2% և -0.1%, այն դեպքում, երբ ճգնաժամին դիմակայելու համար ՀՀ Կառավարությունը մշակել և կյանքի էր կոչել տնտեսությանը պետական աջակցության մի շարք ծրագրեր, որոնց համար նախատեսված ֆինանսական միջոցները հիմնականում տրվել են որպես պետական պարտք:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է և չի կարող օպտիմալ համարվել, ավելին՝ բավական հեռու է նույնիսկ այս ցուցանիշի համաշխարհային միջինից: Հետևաբար պետական ծախսեր/ՀՆԱ փոքր ցուցանիշը փոքր չափով է նպաստում տնտեսական աճին, իսկ ճգնաժամային իրավիճակներում, երբ տնտեսությունն անկում է ապրում՝ պետական ծախսերի նույնիսկ 27.7% և 14.6% (համապատասխանաբար՝ 2008 և 2009 թթ.) աճը ոչ միայն ի զորու չէ կասեցնելու անկումը, այլև նպաստում է անկմանը համապատասխանաբար՝ -0.2% և -0.1%:

Մյուս կողմից՝ այս հանգամանքը վկայում է պետական ծախսերի կառուցվածքի և ծախսման ուղղությունների զգալի անարդյունավետության մասին: 2000-2012 թթ.պետական ծախսերը կազմելով ՀՆԱ միջինը՝ 24-25%, տնտեսական աճին լավագույն դեպքում նպաստել են ընդամենը 1.9% (13.9% աճի պայմաններում՝ 2005 թ.), ինչը բացարձակ մեծությամբ կազմում է ՀՆԱ իրական աճի ընդամենը 10% կամ շուրջ 35.0 մլրդ դրամ: Այս ամենը պայմանավորված է պետական ծախսերի կառուցվածքում արտադրողական և բազմարկչային մեծ էֆեկտ ունեցող ծախսերի փոքր տեսակարար կշռով: Բացի դրանից, այդ ծախսերի իրականացումն ուղեկցվում է զգալի կոռուպցիոն ռիսկերով:

Մյուս կողմից՝ դա պայմանավորված է նաև տնտեսության կառուցվածքով և ներմուծման մեծ մասնաբաժնով. պետական ծախսերի ցանկացած ուղղություն ուղղակի կամ անուղղակի ձևով ֆինանսավորում է ներմուծումը: Իսկ այդպիսի կառուցվածք ունեցող տնտեսությունում ճգնաժամային իրավիճակներում պետական ծախսերի աճը ոչ թե կասեցնում, այլ նպաստում է տնտեսական

անկմանը, քանի որ ներմուծումը ֆինանսավորելու միջոցով արագանում է երկրից կապիտալի արտահոսքը:

Եվ, վերջապես, ճգնաժամային 2008-2009 թթ. ՀՀ տնտեսական աճին պետական ծախսերի բացասաբար նպաստելու պատճառների մեջ էական է նաև տնտեսությանը պետական աջակցության նպատակով իրականացվող ծրագրերի ու պետական պարտքի ձևով ներգրավված միջոցների՝ տեղաբաշխելու և «աշխատեցնելու» մեխանիզմների արդյունավետությունը: Այսպես՝ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց հսկայական միջոցներ ծախսել տնտեսությանը «օգնելու համար», և այդ միջոցների մեծ մասը պարտքի տեսքով էր, ուստի պետական ծախսերի աճը (կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ծրագրի շրջանակներում) հնարավոր եղավ ապահովել միայն ամբողջությամբ արտարժույթով ներգրավված պետական պարտքի ավելացման հաշվին: Պետական աջակցության տարբեր ծախսեր սպասարկող բանկերում կուտակված արտարժույթային միջոցները, շատ արագ փոխակերպվելով դրամի, անցան մասնավոր տնտեսական գործակալների ձեռքը (հիմնականում՝ խոշոր), քանի որ արդեն ճգնաժամի առաջին փուլը ցույց տվեց, թե որքան անկայուն է ՀՀ արժույթը՝ աշխարհի այլ արժույթների համեմատությամբ: Տնտեսությունում մնաց օր օրի արժեզրկվող դրամը, և արդեն 2009 թ. մարտի 2-3-ին այն արժեզրկվեց շուրջ 20%-ով: Ընդ որում, պետք է նշել, որ մինչ այդ փոխարժեքի «կայունությունը» պահպանվում էր ԿԲ-ի ակտիվ միջամտության շնորհիվ, որի վրա ծախսվել է երկրի արտարժույթային պահուստների մի զգալի մասը, ըստ ոչ պաշտոնական գնահատումների շուրջ 600 մլն դոլար: Հետագայում, մինչև տարեվերջ, ինչպես նաև 2010 թ. ընթացքում ՀՀ դրամն անընդհատ արժեզրկվել է և մարտին կազմել 384.3 դր.<sup>23</sup>: Այսինքն՝ տնտեսության աջակցության համար ներգրավված արտարժույթային միջոցների մի մասը կամ չձառայեց նպատակին ընդհանրապես՝ մնալով տնտեսության ֆինանսական հատվածում, կամ օգտագործվեց փոխարժեքի կտրուկ տատանումները կանխելու համար: Ահա այս հանգամանքներն են պայմանավորել տնտե-

<sup>23</sup> ՀՀ ԱՎԾ-ի տեղեկագրեր 2007-2009 թթ.:

սական աճին պետական ծախսերի նպաստելու ցուցանիշի փոքր արժեքը, ինչն էլ ճգնաժամային շրջանում ստացել է բացասական դրսևորում:

#### 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Տնտեսական աճի որակի գնահատման հիմնախնդիրը դարձավ արդիական 20-րդ դարի 70-ական թվականներին, առաջին հերթին՝ զարգացած երկրների համար, երբ դրանց հետագա զարգացումը, էքստենսիվ աճի հիման վրա, բախվեց էական սահմանափակումների. «նախապես շոկերը» ստիպեցին արտադրողներին մտածել՝ անցում կատարելու էներգախնայող տեխնոլոգիաների, իսկ շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանի մեծացումը հարկադրեց այդ երկրների կառավարություններին խստացնել բնապահպանական օրենսդրությունը: Ինչպես նշել է Ու. Ռոսթոուն, զարգացած երկրների տնտեսությունները լայն սպառման ապրանքների արտադրության փուլից անցում կատարեցին «կյանքի որակ փնտրելու» փուլին<sup>24</sup>: Պարզ քանակական տնտեսական աճը մնաց հետին փուլում՝ զիջելով տեղը որակյալ աճին:

Տնտեսական միջավայրի որակում տեղի ունեցող փոփոխությունները չէին կարող չանդրադառնալ տնտեսական աճի բնույթի վրա: Առաջին պլան մղվեց ոչ թե «տեմպերի հետևից ընկնելը», այլ դրանց որակական հատկանիշների լրացումը: Տնտեսական աճի որակի հիմնախնդիրը ձեռք բերեց լրացուցիչ արդիականություն:

Քննարկենք «աճի որակի» բնութագրման հիմնական մոտեցումները:

**1. Աճի որակը միջճյուղային համամասնությունների աճի փրճման օպորտուն մակարդակն է:** Ի սկզբանե աճի որակի հիմնախնդիրը դիտարկվել է որպես տնտեսական աճի հավասարակշռվածության, դրա սոցիալական արդյունավետության հիմնա-

<sup>24</sup> Rostow W. W., The Stages of Economic Growth: A Non-Communist Manifesto. Cambridge Univ. Press, 1960.

խնդիր: Այսպես՝ Վ. Գ. Կամանը նշում է, որ աճի որակի հիմնախնդիրը արդյունքների դինամիկայի տեմպերի և արտադրության գործոնների օպտիմալ հարաբերակցության ապահովումն է: Տնտեսական աճի որակական կողմը բնութագրվում է նյութական արտադրության կարևորագույն ճյուղերի աշխատանքի արտադրողականության ցուցանիշներով:

Արտադրված ազգային եկամտի որակը Կամանն առաջարկում է չափել ցուցանիշների այնպիսի համակարգով, ինչպիսիք են՝

- արտադրության միջոցների և սպառման ապրանքների տեսակարար կշիռը ազգային եկամտի, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության մեջ,
- վերամշակող ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռը համախառն արդյունքի և ազգային եկամտի մեջ,
- նոր արտադրանքի տեսակարար կշիռը,
- «որակի նշանով» ապրանքների տեսակարար կշիռը:

Կ. Ի. Միկուլսկին նշել է, որ տնտեսական աճի որակական գնահատականը բացահայտում է, թե ինչ է արժենում հասարակությանը արտադրության ընդլայնումը, և ինչ է դա տալիս հասարակական պահանջմունքների բավարարմանը:

**2. Աճի որակը հայրենական արտադրանքի որակական բնութագրիչ է:** Այս առնչությամբ Վ. Մ. Զուբովն առաջարկել է ցուցանիշների ամբողջական համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատելու տնտեսական աճի որակը: Դրանք են՝

- տնտեսության սոցիալական ուղղվածությունը բնութագրող ցուցանիշներ (լայն սպառման ապրանքների արտադրության դինամիկայի ցուցանիշներ),
- ցուցանիշներ, որոնք բնութագրում են վերարտադրության որակական նոր պայմանները (արտադրանքի և տեխնոլոգիաների էկոլոգիական վիճակը),
- արտադրության արդյունավետության ցուցանիշներ,
- արտադրության կառուցվածքի ցուցանիշներ (բարձր տեխնոլոգիաների ճյուղերի և ապրանքային խմբերի տեսակարար կշիռը),

- արտադրանքի որակի ցուցանիշներ (արտադրանքի տեխնիկական ցուցանիշները և մրցունակությունը համաշխարհային շուկայում)<sup>25</sup>:

Քանի որ աճի որակի ընդհանրական համաթիվ կառուցելը ցուցանիշների ողջ համակարգի հիման վրա բավականին բարդ է, Զուբովն առաջարկել է աճի որակի գնահատման պարզեցված մոտեցում, որը գլխավորապես հաշվի է առնում բարձր տեխնոլոգիաներով հագեցվածության աստիճանը և արտադրանքի մրցունակությունը համաշխարհային շուկայում: Այսպես՝ ՀՆԱ-ում գիտելիքահենք ծառայության արտահանման մեծ մասնաբաժինը վկայում է տվյալ տնտեսության աճի բարձր որակի մասին: Մյուս կողմից՝ եթե արտահանման մեջ գերազանցում է հանքարդյունաբերական ճյուղերի արտադրանքը, իսկ ներմուծման մեջ՝ վերամշակող ճյուղերինը, ապա վերարտադրության ներքին կառուցվածքի զարգացած չլինելու մասին եզրահանգումը արդարացված է: Նաև կարելի է խոսել աճի ցածր որակի մասին, եթե բարձր տեխնոլոգիաների ներմուծումը գերազանցում է դրանց արտահանումը<sup>26</sup>:

Տնտեսական աճի որակի գնահատականը Զուբովը տալիս է երեք չափանիշների հիման վրա՝ արտադրության գիտելիքահենքության մակարդակը, արտադրանքի միջազգայնացումը, ընդհանուր թողարկման մեջ ծառայությունների ոլորտի մասնաբաժինը: Աճի որակի հիմնական ցուցանիշներն են՝

- գիտատար արտադրության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի և արտահանման մեջ,
- ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի և արտահանման մեջ,
- գիտատար ծառայությունների տեսակարար կշիռը ծառայությունների ոլորտի ընդհանուր ծավալում, ինչպես նաև ծառայությունների արտահանման մեջ<sup>27</sup>:

Կարծում ենք, որ տնտեսական աճի որակը վերլուծելիս ճիշտ կլինի կիրառել ոչ թե գիտատար արտադրության և ծառայություն-

<sup>25</sup> Зубов В. М., Качество экономического роста. Изд. Красноярского Юньта, 1991, с. 38-40.

<sup>26</sup> Зубов В. М., Качество экономического роста. Изд. Красноярского Юньта, 1991, с. 112.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 96:



ների ոլորտի մասնաբաժինների ընդհանուր ցուցանիշներ, այլ դրանց հավելածերը ՀՆԱ հավելածի նկատմամբ: Այդ դեպքում տնտեսական աճի որակի ցուցանիշների համակարգը կընդուներ հետևյալ տեսքը՝

- գիտատար արտադրության և դրա արտահանման մասնաբաժինը ՀՆԱ և ընդհանուր արտահանման հավելածում,
- ծառայությունների ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ և արտահանվող ծառայությունների հավելածում,
- գիտատար ծառայությունների մասնաբաժինը ծառայությունների ոլորտի ընդհանուր հավելածում և ծառայությունների արտահանման հավելածում:

Մեր կարծիքով՝ ավելի կարևոր ցուցանիշներ են առաջին և երրորդ խմբի ցուցանիշները, որոնք հաշվի են առնում արտադրվող արդյունքի որակական բնութագրիչները: «Ծառայությունների ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ և արտահանվող ծառայությունների հավելածում» ցուցանիշը բավարար չէ տնտեսական աճի որակի գնահատման համար, անհրաժեշտ է վերլուծել ծառայությունների ոլորտի բաղկացուցիչները (մասնավորապես՝ գիտատար ծառայությունների տեսակարար կշիռը):

**3. Աճի որակը հայրենական արտադրանքի մրցունակությունն է:** Մ.Ն. Ուզյակովը ներկայացնում է տնտեսական աճի որակի գնահատման մեթոդաբանությունը հետևյալ կերպ՝ տարեկան արդյունքի ընդլայնումը որոշվում է ըստ համաշխարհային, գլխավորապես՝ զարգացած երկրների շուկաներում ձևավորվող փոխանակային համամասնությունների<sup>28</sup>: Մեր կարծիքով՝ տնտեսական աճի որակի գնահատման այս մոտեցումն ունի էական սահմանափակումներ: Առաջին՝ այն գլխավորապես կապված է համաշխարհային շուկայի հետ և հաշվի չի առնում արտադրանքի որակի ներքին գնահատականները: Երկրորդ՝ ճշմարիտ է սույն մոտեցումը կիրառել այն երկրների համար, որոնք ունեն միանման վերարտադրողական մեխանիզմ: Դրա կիրառությունն այն երկրների համար, որոնց տնտեսական համակարգերը գտնվում են ձևափոխման գործընթացներում, կարող է հանգեցնել չիմնա-

<sup>28</sup> Узяков М.Н., Трансформация российской экономики и возможности экономического роста. М., Изд-во ИСЭПН, 2000, с. 274-275.

վորված եզրակացությունների՝ չափազանց բարձր կամ, ընդհակառակը, չափազանց ցածր որակի մասին:

**4. Աճի որակը կյանքի որակն է:** Տնտեսական աճի որակի գնահատման մեկ այլ մոտեցումը՝ շեշտը դրվում է հիմնականում աճի սոցիալական և էկոլոգիական արդյունքների վրա, այսինքն՝ բնակչության կյանքի որակի վրա: Ն.Պ. Կուզնեցովան նշում է. «...տնտեսական աճի որակական ցուցանիշը «կյանքի որակի» ցուցանիշն է: Կյանքի որակը լայն հասկացություն է, որը ներառում է սոցիալական, մշակութային և բարոյական արժեքների ամբողջություն, հնարավորություն է տալիս մարդուն՝ ապրելու հանրության հետ ներդաշնակության մեջ: Կյանքի որակի մասին վկայում են առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության ոլորտների զարգացումը, կենցաղի պայմանները, բնակչության բոլոր խավերի սոցիալական և իրավական պաշտպանվածությունը»<sup>29</sup>: Մեր կարծիքով՝ «կյանքի որակ» հասկացությունը բնութագրում է տնտեսական զարգացման արդյունքը՝ որպես ավելի բարդ ու բազմակողմանի գործընթաց, որտեղ տնտեսական աճը զբաղեցնում է որոշակի տեղ:

Տնտեսական աճի որակի գնահատման ներկայացված մոտեցումներն ունեն բազմաթիվ «հատման կետեր», սակայն շեշտադրումը կատարում են հիմնախնդրի տարբեր կողմերի վրա: Տնտեսական աճի որակը դրսևորվում է տնտեսական և սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում և կարող է ներկայացվել հետևյալ բնութագրիչներով՝

1. Արտադրության գործոնների որակի աճ, որ չափվում է տեխնիկական (արտադրողականության բնափրային ցուցանիշներ) և տեխնիկատնտեսական (աշխատանքի արտադրողականություն, ֆոնդահատույց) արդյունավետության ցուցանիշներով:

2. Արտադրվող ապրանքների և ծառայությունների որակի աճ, որ չափվում է արդյունքի տեխնիկական և սպառողական հատկանիշներով, ինչպես նաև միջազգային շուկաներում դրա մրցունակությամբ:

<sup>29</sup> Кузнецова Н.П., Экономический рост в историческом контексте. СПб, Изд-во СПб гос. Ун-та, 1996, с.77.

3. Ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքի պրոգրեսիվ փոփոխություններ, որոնք ազգային տնտեսական կառուցվածքի համապատասխանությունն են ԳՏԱ-ի պահանջներին՝ հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները: Չափվում են տնտեսության կառուցվածքում բարձր տեխնոլոգիաների ճյուղերի մասնաբաժնով, վերջնական արդյունքում ունեցած ներդրումով:

4. Աճի սոցիալական արդյունավետություն, որ բնակչության կյանքի որակի և մակարդակի աճն է, տնտեսական աճից ստացված բարիքների ավելի արդարացի բաշխումը և շրջակա միջավայրի բարեկարգումը: Չափվում է սոցիալ-տնտեսական (ՀՆԱ դինամիկան բնակչության 1 շնչի հաշվով) և սոցիալական (ՀՆԱ-ում անձնական սպառման, տնօրինվող եկամտի տեսակարար կշռի փոփոխությունը) արդյունավետության ցուցանիշներով, եկամտների վերաբաշխման հավասարաչափության աստիճանով, շրջակա միջավայրի որակի, արտադրական անվտանգության բնութագրիչներով:

Տնտեսական աճի դրական տեմպերի ապահովման հիմնախնդիրը ՀՀ տնտեսական քաղաքականության գերակա ուղղություններից է: Ոչ պակաս կարևոր է աղքատության դեմ պայքարի հիմնախնդիրը: Հարցն այն է, թե ինչպես են քաղաքականության այդ երկու ուղղությունները փոխգործակցում միմյանց հետ: Ի՞նչ չափով է դրանցից յուրաքանչյուրը նպաստում մյուսի իրականացմանը և ի՞նչ չափով՝ հակազդում:

Տնտեսական աճի և աղքատության հաղթահարման միջև կապն ունի փոխապայմանավորված բնույթ՝

- աղքատության մակարդակի նվազեցումը տնտեսական աճի գործոն է,
- աղքատության հաղթահարումը տնտեսական աճի արդյունք է:

Մեր հետազոտության շրջանակում հետաքրքրություն է ներկայացնում վերջին փոխկապվածությունը: Դրան տնտեսագետներն անդրադարձան 20-րդ դարավերջին՝ կապված ազգային տնտեսությունների կայուն զարգացման հանդեպ ուշադրության բարձրացման հետ: Համաշխարհային հանրությունը սկսեց զբաղվել թույլ երկրների հիմնախնդիրներով, ինչպես նաև տնտեսությունների վերականգնմամբ, որոնք անկում էին ապրում անցումային ժամանա-

կաշրջանի ճգնաժամերից հետո: Չնայած այս ոլորտում առկա ուսումնասիրություններին՝ այդ աշխատությունները չեն ենթադրում այդ փոխկապվածության ուսումնասիրության ամբողջական մոտեցում: Աղքատության մակարդակի նվազեցման վրա տնտեսական աճի ազդեցության հիմնախնդիրը դեռևս լուծված չէ իր ամբողջականության մեջ:

Թեև զարգացման ավանդական տեսությունը պնդում է, որ ՀՆԱ աճը պետք է անպայման անդրադառնա աղքատության մակարդակի նվազման վրա<sup>30</sup>, մի շարք զարգացող երկրների վիճակագրությունը ցույց է տալիս ոչ այդքան միանշանակ արդյունքներ: Ըստ դրա՝ չենք կարող եզրակացնել, որ ՀՆԱ և աղքատության մակարդակի միջև առկա է մշտական կախվածություն: Այսպես՝ Իրանը, Թայվանը և Հարավային Կորեան հաստատում են դասականների հանձնարարականները. ցուցադրում են ինչպես տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպեր, այնպես էլ՝ աղքատության մակարդակի նվազեցում: Մյուս կողմից, օրինակ՝ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Մեքսիկան և Պանաման, աճի բարձր տեմպերի դեպքում դրսևորում են անհավասարության խորություն:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը սկսվեց 2008 թ. չորրորդ եռամսյակից, հարվածել է նաև Հայաստանի տնտեսությանը: ՀՆԱ տարեկան իրական աճը 2008 թ. կազմել է միայն 6.9%՝ համեմատած 2000-ականների ընթացքում գերազանցապես գրանցված տարեկան միջին աճի երկնիշ ցուցանիշների հետ: 2009 թ. արդյունքներով արձանագրվեց Հայաստանի տնտեսության խոր՝ 14.1% անկում: Որպես արդյունք՝ նույն տարում աղքատության մակարդակն առաջին անգամ 1998 թ. աճեց: 2010 թ. ճգնաժամը շարունակեց իր բացասական ազդեցությունը մեր երկրում: Տնտեսական աճը կազմեց 2.2%, սակայն աղքատության մակարդակը շարունակեց աճել: 2011 թ. Հայաստանի տնտեսության համար համեմատաբար բարվոք էր. արձանագրվեց 4.7% աճ: Որպես արդյունք՝ նույն տարում գրանցվեց աղքատության մակարդակի աճի դադարեցում<sup>31</sup>:

<sup>30</sup> Тодаро М. П., Экономическое развитие / Под ред. С.М. Яковлева, Л.З. Зевина.- М.: Экономический факультет МГУ, ЮНИТИ, 1997.


<sup>31</sup> Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2011 թթ., էջ // [http://www.armstat.am/file/article/poverty\\_2012a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf)

**ՀՆԱ աճի և աղքատության մակարդակի դինամիկան<sup>32</sup>**

Ցուցանիշը	2008	2009	2010	2011
ՀՆԱ՝ շուկայական գներով	106,9	85,9	102,2	104,7
Աղքատության մակարդակ	27,6	34,1	35,8	35

Վերը նշված մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ դրանց միջև գոյություն չունի կայուն կախվածություն: Միաժամանակ, պետք է նշել, որ տնտեսական աճի և աղքատության հաղթահարման միջև եղած կապը չի կարելի բնութագրել որպես պատճառահետևանքային: Տնտեսական աճն ինքն իրենով բավարար չէ, որպեսզի տնտեսությունում նկատվի աղքատության մակարդակի նվազեցում: Տնտեսական աճի տեմպերի արագացումը հանգեցնում է բնակչության եկամուտների դիֆերենցման, և միայն հավասարաչափ որակական աճը կարող է հանգեցնել աղքատության նվազեցմանը երկրում:

Տնտեսական աճի որակի գնահատման մոտեցումները թույլ տվեցին ստեղծել որակյալ տնտեսական աճի մոդելը (գծ. 2):



**Գծապատկեր 2. Որակյալ տնտեսական աճի մոդելը**

<sup>32</sup> Կազմված է մեր կողմից՝ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

Որակյալ աճը բնութագրվում է հետևյալ բաղադրիչներով՝

- մասնակիցների կազմը (վերամշակող արդյունաբերության ընկերություններ, բարձրտեխնոլոգիական ճյուղեր, նորարարական ընկերություններ),
- աղքատները (աշխատանքի արտադրողականության բարձրացումը),
- աճի տեսակը (ինտենսիվ, նորարարական),
- աճի գործոնները (հավասարակշռված):

Աճի որակը դրսևորվում է իր շարունակականության, հավասարակշռվածության, արտաքին գործոններից կախվածության մեջ չլինելու հանգամանքով և զարգացման ցուցանիշների վրա (մարդկային զարգացման ցուցիչը, կյանքի որակը և այլն) ունեցած դրական ազդեցությամբ:

Աճի որակի վերլուծության համար անհրաժեշտ է գնահատել տնտեսական աճը հինգ չափորոշիչներով՝ ժամանակային, տարածքային, ճյուղային, վերարտադրողական և նորարարական: Որակական տնտեսական աճ կարող է գրանցվել միայն այն դեպքում, երբ բավարարվում են այս բոլոր չափորոշիչները:

ՀՀ վերջին տարիների տնտեսական աճը չի կարելի համարել որակյալ: Մասնակիցների կազմում չեն գերակշռում բարձր տեխնոլոգիաները, նորարարական ճյուղերը, աշխատանքի արտադրողականության տեմպերն այդքան էլ բարձր չեն, աճի տեսակը հիմնականում էքստենսիվ է, իսկ աճի գործոնները՝ անհավասարակշիռ: ՀՀ վերջին տարիների տնտեսական աճը համակարգված չէ, կտրուկ արձագանքում է փոփոխվող արտաքին պայմաններին: Աճի ցածր որակն ուժեղացնում է սոցիալական բևեռացվածությունը և չի նպաստում աղքատության հիմնախնդրի հաղթահարմանը:

ՀՀ-ում 2011 թ. բնակչության ամեն երրորդ անդամը՝ 35.0%-ը, եղել է աղքատ, ամեն հինգերորդը՝ 19.9%-ը, շատ աղքատ, իսկ 3.7%-ը՝ ծայրահեղ աղքատ: Նախորդ տարիների (2009-2011 թթ.) ընթացքում, 2008 թ. համեմատությամբ, մոտ 250 հազար մարդ դարձել է աղքատ (աղքատների թվաքանակը 2011 թ. մոտ 1.1 մլն էր՝ մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), 240 հազարը նույն ժամանակահատվածում՝ շատ աղքատ. այդ ցուցանիշը հասել է 650 հազարի: Միայն երեք տարիների ընթացքում մոտ 70 հազարը դարձել է ծայրահեղ աղքատ. 2011 թ. այս ցուցանիշը մոտ

120 հազար էր: Միևնույն ժամանակ, 2011 թ., նախորդ տարվա համեմատ, աղքատների թիվը նվազել է մոտ 22 հազարով, շատ աղքատներին՝ 43 հազարով, իսկ ծայրահեղ աղքատների թիվն աճել է 23 հազարով<sup>33</sup>:

Երկրում ձևավորված աղքատության մոդելը, առաջին հերթին, զբաղվածությունից ստացված եկամուտների ցածր մակարդակի հետևանք է: Գործոնները, որոնք կապված են աշխատանքի շուկայում ծայրահեղ չգոհացնող իրավիճակների հետ, ՀՀ աղքատության հիմնական պատճառներից են: Հաշվի առնելով ՀՀ բնակչության աղքատության տնտեսական բնույթը՝ զարմանալի չէ, որ աճի և վերաբաշխման բաղադրիչների աճը պետք է զբաղեցնի և զբաղեցնում է գլխավոր դերը աղքատության մակարդակի նվազեցման գործում:

Այսպիսով՝ աղքատության հիմնախնդրի հաղթահարումը ՀՀ-ում ոչ այնքան սոցիալական քաղաքականության խնդիր է, որքան որակական տնտեսական աճի անհրաժեշտ տեմպերի ապահովման: Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ և հնարավորություն տալ բնակչությանը իրացնելու իր աշխատանքային ներուժը, ապահովել ոչ թե պարզապես զբաղվածության որոշակի մակարդակ, այլ արդյունավետ, բարձր վարձատրվող: Նման համընդգրկուն հիմնախնդրի լուծումը հնարավոր է միայն որակյալ տնտեսական աճի ռազմավարության իրականացման պայմաններում, որը մարդկանց հասանելի է դառնում արդյունավետ զբաղվածությամբ՝ վերացնելով աշխատունակ խավի սոցիալական վատթար պայմանները:

Տնտեսական աճի որակի հիմնական դրսևորումը, որն ազդում է թողնում աշխատողների եկամուտների վրա, աշխատանքի արտադրողականության աճն է: Միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով է հնարավոր ապահովել եկամուտների իրական աճ, որը ներդաշնակ է տնտեսական աճի հետ և չի առաջացնում ինֆլյացիոն գործընթացներ: Աշխատանքի արտադրողականության բարձրացման միակ երաշխիքը ներկայիս պայմաններում բարձր տեխնոլոգիաներն են, որոնց հիման վրա միայն կարելի է ստեղծել մրցունակ տնտեսություն, զբաղեցնել հա-

մապատասխան դիրք միջազգային ասպարեզում և ազգաբնակչության համար ապահովել բարեկեցության արժանապատիվ մակարդակ: Պետք է ենթադրվի գիտության առաջընթաց զարգացում, արտադրության տեխնիկական վերազինում, հիմնական ֆոնդերի նորացում, նորարարական ոլորտների զարգացում և այլն:

Ըստ տնտեսական աճի որակի մոդելի, ՀՀ իրադրության վերլուծության հիման վրա, ներկայացնում ենք աղքատության դեմ պայքարի հետևյալ հանձնարարականները՝

- փոքր ձեռներեցության, այդ թվում՝ նորարարական գործարարության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- անվճար կամ սոցիալական ծառայությունների կողմից լրահատկացվող ռեսուրսների հասանելիության հավասարեցում,
- բարենպաստ պայմանների ստեղծում որակավորված աշխատուժի հոսքի համար դեպի այն վայրեր, որտեղ դա առավել արդյունավետ է օգտագործվում,
- հետագա տնտեսական աճի համար պայմանների ստեղծում տնտեսության բազմազանեցման, վերամշակող արդյունաբերության զարգացման միջոցով և դրանց հիման վրա՝ բնակչության եկամուտների բարձրացում,
- գյուղատնտեսական հատվածի հետագա զարգացման համար արդյունավետ պայմանների ստեղծում,
- սոցիալական կապիտալի ամրացում՝ սոցիալական ծրագրերի խթանում առողջապահության, գիտության, բնակարանային շինարարության, գյուղատնտեսության բնագավառներում:

<sup>33</sup> Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում, 2008-2011 թթ., էջ 37, [http://www.armstat.am/file/article/poverty\\_2012a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf)

## 5. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՇՈԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Տնտեսական շոկերը, որպես անսպասելի, չկանխատեսված պատահարներ, իրենց ազդեցությունն են թողնում տնտեսական համակարգերի վրա, և քաղաքականություն մշակողները պետք է հստակ պատկերացում ունենան տնտեսության վրա տնտեսական շոկերի ազդեցությունների ուղղությունների, չափերի և հակազդման մեխանիզմների մասին:

Տնտեսագիտության մեջ շոկը սահմանվում է որպես անսպասելի, չկանխատեսված պատահար, որը դրական կամ բացասական ազդեցություն է թողնում տնտեսության վրա: Այլ կերպ ասած, տնտեսական համակարգի անկանխատեսելի շեղումները պայմանավորված են տնտեսական շոկերով: Հետևաբար՝ կարևորվում է, թե ինչպես չափել տնտեսական շոկերի ազդեցությունն ու ուժգնությունը:

Այսպես՝ եթե երկրաշարժերի և այլ բնական աղետների թողած ազդեցության և ուժգնության գնահատման տարբեր մոտեցումներ ու մեթոդաբանություններ կան, ապա տնտեսագիտությունն այնքան էլ հարուստ չէ տնտեսական շոկերի ուժգնության գնահատման մեթոդաբանական գործիքակազմով: Սակայն տնտեսական որոշումներ կայացնելու համար կարևոր է հստակ պատկերացնել տնտեսական շոկի ազդեցության չափը և տալ քանակական գնահատականներ:

Ինդիքն առավել կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում, քանի որ տնտեսությունն այստեղ նոր-նոր է վերականգնվում 2008-2009 թթ. տնտեսական անբարենպաստ շոկերից առաջացած տնտեսական անկումից, և պետք է հստակ պատկերացնել տնտեսական աճի կառուցվածքային այն առանձնահատկությունները, որոնց միջոցով ՀՀ տնտեսությունը դառնում է առավել զգայուն տնտեսական շոկերի նկատմամբ:

Հետազոտությունում ներկայացված է շոկերի ազդեցության գնահատման մեթոդաբանությունը, որի հիման վրա գնահատվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա՝ ընդգծելով վերջինիս կառուցվածքային այն հիմնախնդիրները, որոնք մեծացնում են տնտեսությունների շոկային զգայունությունը:

### 1. Տնտեսական համակարգի վրա շոկերի ուժգնության գնահատման մեթոդաբանություն

Տնտեսական շոկերը դրսևորվում են տարբեր ուղղություններով, ուժգնությամբ և ազդեցության հետևանքներով: Շոկերի ազդեցության գնահատման համար սույն հետազոտությունում կօգտվենք Մ. Կոչիայի ներկայացրած մեթոդաբանությունից՝ կիրառելով այն ճյուղային կտրվածքով<sup>34</sup>:

Կոչիայի գործիքը նախատեսում է գնահատել տնտեսական շոկերի ամպլիտուդան: Առավելությունը նրանում է, որ արդեն տարբեր ժամանակահատվածներում դրսևորված շոկերը կարելի է համեմատել միմյանց հետ: Ավելին, գնահատվող ինդիկատորների միջոցով հնարավոր է պատմական տվյալների հիման վրա ստանալ ինդիկատորների արժեքների միջակայքեր, որոնք ազդանշանային համակարգի դեր կարող են ունենալ: Որպես կանոն, տնտեսական տատանումների էքսպանսիաները և անկումները չափվում են նախորդ ժամանակահատվածի նկատմամբ ՀՆԱ տոկոսային փոփոխությամբ, որը տնտեսական շոկերի ազդեցության կողմնորոշչային տեղեկատվություն է: Սակայն անկումներն ու էքսպանսիաները կախված են նաև վերջիններիս ժամանակային տևողությունից: Այդ պատճառով տնտեսական շոկերի ուժգնությունը գնահատելիս հաշվի է առնվում նաև շոկի տևողությունը:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկվում են տնտեսական շոկերի ազդեցության ինդիկատորներ, ինչպես նաև դրանք դասակարգվում են՝ ըստ ազդեցության ուժգնության:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկվում ենք տնտեսական շոկերի մագնիտուդան (Magnitude of Economic Shocks), ընդ որում՝ այն ներկայացվում է երկու տարբեր ինդիկատորների միջոցով:

1. Տնտեսական սահմանափակող շոկերի ամպլիտուդայի ինդիկատորը (Magnitude of Economic Shock for Contractions) հետևյալ բանաձևի միջոցով գնահատում է բացասական շոկերի ազդեցությունը:

<sup>34</sup> Business cycles and the scale of economic shock, Mario Coccia, National Research Council (Italy), Working Paper Ceris-Cnr, N 6/2009, p. 9.

$$MESX_i = \ln \frac{[a] \times T}{T}$$

2. Տնտեսական խթանող շոկերի ամպլիտուդայի ինդիկատորը (Magnitude of Economic Shock for Expansions) հետևյալ բանաձևի միջոցով գնահատում է դրական շոկերի ազդեցությունը.

$$MESX_i = \ln \frac{[a] \times T}{T} - 1$$

Հավասարումների մեջ a-ն տնտեսական շոկի ամպլիտուդան է՝ արտահայտված ՀՆԱ տոկոսային փոփոխությամբ, իսկ T-ն՝ սահմանափակող կամ խթանող ժամանակահատվածի տևողությունը՝ ամիսներով արտահայտված: Եթե  $X > Y$  և  $MESX_i = X$  ու  $MESX_j = Y$ , ապա սա նշանակում է, որ i-րդ ժամանակահատվածի սահմանափակող շոկն ավելի ուժգին է, քան j-րդ ժամանակահատվածի շոկը: Ընդ որում, MESX և MESX-ի ցուցանիշներն ընկած են [0;1] միջակայքում:

Մարիո Կոչիան MESX և MESX ինդիկատորները հաշվարկել է ԱՄՆ-ի տնտեսության տվյալների հիման վրա՝ գնահատելով MESX և MESX ինդիկատորները երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև 2008 թ. երրորդ եռամսյակում դրսևորված տատանումների համար: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա նա MESX և MESX ցուցանիշները խմբավորել է, որպեսզի դասակարգի տնտեսական շոկերի մագնիտուդան՝ ըստ ազդեցությունների: Կոչիայի ներկայացրած դասակարգումը պատկերված է աղյուսակ 6-ում և 7-ում:

Աղյուսակ 6

**Ընդլայնողական շոկերի ուժգնության աստիճանները**

Ընդլայնման աստիճանը	MESX մագնիտուդայի ցուցանիշը	Դրական շոկի ուժգնությունը
V	>0.95	շատ ուժեղ
IV	0.9-0.94	ուժեղ
III	0.85-0.89	միջին
II	0.8-0.84	չափավոր
I	<0.79	թույլ

Աղյուսակ 7

**Սահմանափակող շոկերի ուժգնության աստիճանները**

Ընդլայնման աստիճանը	MESX մագնիտուդայի ցուցանիշը	Դրական շոկի ուժգնությունը
V	>0.81	շատ ուժեղ
IV	0.6-0.8	ուժեղ
III	0.4-0.6	միջին
II	0.2-0.4	չափավոր
I	<0.2	թույլ

Սույն հետազոտության տեսանկյունից՝ նշված մեթոդաբանությունն ունի որոշակի սահմանափակումներ և թերությունները: Առաջին՝ ուժգնության գնահատման միջակայքերը կառուցված են ԱՄՆ-ի տնտեսության տվյալների հիման վրա: Այնուամենայնիվ, հետազոտության շրջանակներում այս սահմանաչափերը կկիրառվեն, քանի որ ՀՀ տնտեսության համար հնարավոր չէ կառուցել այլ միջակայքեր՝ տվյալների պատմական շարքերը շատ կարճ լինելու պատճառով: Երկրորդ՝ Կոչիայի կողմից սույն ինդիկատորն օգտագործվում է տնտեսական շոկերի ազդեցությունը ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի վրա գնահատելու համար. չի գնահատվում առանձին ճյուղերում դրսևորված շոկերի ազդեցությունների ուժգնությունը:

Սույն հետազոտությունում Կոչիայի ինդիկատորների միջոցով կգնահատվի առանձին խոշոր ճյուղերի անկումների կամ վերելքների մագնիտուդան: Այդ նպատակով տնտեսության ճյուղերը կբաժանվեն խոշորի և փոքրի: Փոքր են այն ճյուղերը, որոնց մասնաբաժինը ՀՆԱ-ում փոքր է 5%-ից: Այնուհետև կառուցվածքային սիմուլյացիայի պարզագույն եղանակով կգնահատվի նրանց անկման կամ վերելքի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա: Եվ համապատասխան ցուցանիշների և ճյուղի անկման կամ վերելքի տևողության հիման վրա կհաշվարկվեն Կոչիայի ինդիկատորները:

**2. 2001-2008 թթ. Հայաստանի տնտեսության խոշոր ճյուղերի վերելքի և 2008-2009 թթ. ճգնաժամի մագնիտուդայի գնահատումը**

Հետազոտության մեջ կուսումնասիրենք 2000-2010 թթ. տեղաշարժերը: Երկնիշ տնտեսական աճի փուլում տնտեսությունում գրանցվեցին էական տնտեսական շոկեր՝ պայմանավորված արտաքին ներդրումների և տրանսֆերտների կտրուկ աճով: Այս զարգացումներին զուգահեռ, սկսած 2005-ից, անշարժ գույքի գները կտրուկ աճեցին՝ հանգեցնելով կառուցվածքային էական փոփոխությունների: Սակայն արդեն 2008 թ. բացասական շոկերը, պայմանավորված տրանսֆերտների, ներդրումների, միջազգային շուկայում մոլիբդենի և պղնձի գների կտրուկ անկմամբ, հանգեցրին տնտեսական անկման:

«Հ տնտեսական աճի շոկային զգայունության վերաբերյալ թվային և մոդելային վերլուծություններն ու հետազոտությունները հարուստ չեն՝ պայմանավորված հետևյալ գործոններով՝ 1) վիճակագրական երկար շարքերի բացակայություն, 2) տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվության բացակայություն, 3) ստվերային տնտեսության էական առկայություն: Այնուամենայնիվ, կան որոշակի հետազոտություններ, որոնք փորձում են քանակապես գնահատել արտաքին և ներքին շոկերի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա: Նմանատիպ վերլուծություն կատարվել է Համաշխարհային բանկի կողմից՝ „The Caucasian Tiger, Sustaining Economic Growth in Armenia” աշխատությունում, որտեղ կառուցվել է ՀՀ տնտեսական համակարգի սոցիալական հաշիվների մատրիցա, այնուհետև՝ նկարագրվել է շոկային փոփոխությունների ազդեցությունը տնտեսության վրա՝ ըստ 2004 թ. տվյալների<sup>35</sup>: Նշված աշխատության հեղինակները սոցիալական հաշիվների մատրիցաների և ընդհանուր հավասարակշռության մոդելի հիման վրա կատարել էին սիմուլյացիոն վերլուծություններ ադամանդի, շինարարության և արտաքին տրանսֆերտների շոկային փոփոխությունների տնտեսական ազդեցությունների ուղղությամբ (աղյուսակ 8):

<sup>35</sup> Հայաստան, Կովկասյան վագր, հատոր երկրորդ, 2006 թ., The Caucasian Tiger, Sustaining Economic Growth in Armenia, World Bank, 2007:

**Աղյուսակ 8**

**Բացասական շոկերի ազդեցությունների գնահատումը՝ հիմնված սոցիալական հաշիվների մատրիցայի մոդելի վրա**

Շոկ	Ազդեցությունը ՀՆԱ-ի վրա (%-ային փոփոխություն)	Ազդեցությունը աշխարհի եկամտի վրա (%-ային փոփոխություն)		Ազդեցությունը աշխարհի տնտեսության վրա (%-ային փոփոխություն)		Ազդեցությունը տնտեսության վրա (%-ային փոփոխություն)
		որակավորված	չորակավորված	որակավորված	չորակավորված	
<b>Բացասական շոկեր</b>						
ադամանդներ (-50%)	-5.1	-3.7	-5.5	-3.8	-5.5	-4.4
շինարարություն (-30%)	-9.5	-5.7	-9.3	-5.8	-9.3	-8.3
դրամական փոխանցումներ (-50%)	-6.5	-4.4	-6.6	-4.4	-6.6	-11.1

Աղբյուր՝ «Հայաստան, Կովկասյան վագր», հատոր երկրորդ, էջ 37:

Երկնիշ տնտեսական աճի տարիների փուլում տեղի են ունեցել տնտեսական կառուցվածքի էական փոփոխություններ, որոնց արդյունքում տնտեսությունում ձևավորվել են խոշոր և փոքր ճյուղեր: Մասնավոր տնտեսավարողների 98%-ը փոքր և միջին ձեռներեցներ են, սակայն այս սուբյեկտների կողմից արտադրվում է ՀՆԱ-ի շուրջ 30, իսկ առանց գյուղատնտեսության և զուտ անուղղակի հարկերի՝ մոտ 40%-ը: Ստացվում է, որ ՀՆԱ 70%-ն արտադրվում է 2% կազմող խոշոր ընկերությունների և պետական հատվածի կողմից<sup>36</sup>:

Շոկերի ազդեցությունը գնահատելու համար պարզենք, թե տնտեսության որ ճյուղերն են առավել մեծ ազդեցություն թողնում տնտեսական աճի վրա: Նախ՝ տնտեսության ճյուղերը բաժանենք երկու մասի՝ խոշոր և փոքր: Փոքր ճյուղեր են համարվում նրանք, որոնց մասնաբաժինը ՀՆԱ-ում վերջին տասնամյակում միջինում փոքր է 5%-ից: Սույն տրամաբանությամբ տնտեսության խոշոր

<sup>36</sup> «Հայաստանի տնտեսական զեկույց, 2009. Ծգնաժամից դեպի նոր զարգացում», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2010 թ., էջ 67:

ճյուղերն են<sup>37</sup> գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, վերամշակող արդյունաբերություն, շինարարություն, առևտուր, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրություն և բաշխում, տրանսպորտ և կապ:

Այսպիսով՝ տնտեսության մյուս տասը ճյուղերը ՀՆԱ-ում փոքր մասնաբաժին ունեն և ապահովում են ՀՆԱ առավելագույնը 26%-ը: Սրանց մեջ են մտնում կարևոր համարվող այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են, օրինակ՝ հանքագործական արդյունաբերությունը, հյուրանոցային և ռեստորանային հատվածը և այլն: Սրանք և այս խմբում ներկայացվող մյուս ճյուղերը տնտեսական աճի կամ անկման համար որևէ էական նշանակություն չունեն (կարճաժամկետ հատվածում), բացի այդ այս ճյուղերը տնտեսության մյուս հատվածների և աճի ապահովման վրա մեծ մուլտիպլիկատիվ (բազմարկիչ) ազդեցություն չունեն: Արդյունքում՝ «փոքր» ճյուղեր խմբում ներկայացվողները թեև կարող են աղքատության, զբաղվածության և վճարային հաշվեկշռի տեսանկյունից կարևոր համարվել, սակայն տնտեսական աճի ապահովման տեսանկյունից այսօր ոչ կարևոր են:

Համեմատության համար նշենք, որ հանքագործական արդյունաբերությունը փոքր է նույնիսկ կրթության ոլորտից և ապահովում է ՀՆԱ ընդամենը 2%: Այս ոլորտի նշանակությունը պայմանավորված է միայն նրանով, որ ապահովում է արտահանման զգալի մասը: Հյուրանոցային և ռեստորանային հատվածը մի քանի անգամ զիջում է կրթության ոլորտին: Այս ոլորտը կարևորվում է զբաղվածության և զբոսաշրջության սպասարկման առումով: Այնուամենայնիվ, այս ճյուղերը չունեն տնտեսության մյուս հատվածների և աճի ապահովման վրա մեծ մուլտիպլիկատիվ ազդեցություն (աղյուսակ 9):

<sup>37</sup> Ճյուղերն ըստ եվրոպական դասակարգման:

խոշոր և փոքր ճյուղերի կառուցվածքային փոփոխությունները 2000-2011 թթ.

ՃՅՈՒՂԵՐ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
	Մնկանական ՀՆԱ-ի կառուցվածք, %											
<b>ԽՈՇՈՐ ՃՅՈՒՂԵՐ</b>	<b>75.0</b>	<b>75.3</b>	<b>74.8</b>	<b>75.6</b>	<b>74.6</b>	<b>74.6</b>	<b>74.6</b>	<b>73.3</b>	<b>71.5</b>	<b>67.0</b>	<b>66.3</b>	<b>65.8</b>
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	23.2	25.6	23.5	21.5	22.6	19.0	18.7	18.2	16.1	16.7	16.8	19.9
Մշակող արդյունաբերություն	16.8	15.7	15.1	15.3	13.6	13.5	10.8	9.4	8.8	8.7	9.7	10.0
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	7.6	6.7	6.3	5.8	5.3	5.0	3.8	3.3	2.9	3.1	3.1	3.4
Շինարարություն	10.2	9.7	12.6	15.7	15.5	19.6	23.7	24.5	25.3	18.6	17.3	12.8
Արտուր. ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	9.9	10.6	11.1	11.4	11.6	11.4	11.4	10.9	11.6	12.7	12.9	13.4
Տրանսպորտ և կապ	7.2	7.0	6.1	5.9	6.0	6.0	6.3	6.9	6.8	7.2	6.5	6.3
<b>ՓՈՔՐ ՃՅՈՒՂԵՐ</b>	<b>17.5</b>	<b>16.5</b>	<b>16.6</b>	<b>16.5</b>	<b>18.3</b>	<b>18.0</b>	<b>17.9</b>	<b>18.1</b>	<b>18.7</b>	<b>24.1</b>	<b>24.3</b>	<b>25.9</b>
Անշաղթ գույքի հետ կապված գործարարություններ, կարծավար և սպառողների ծառայությունների մատուցում	4.5	4.3	3.9	3.6	3.5	3.2	3.7	3.8	3.7	4.9	4.9	5.2
Պեստական կառավարում	3.3	3.0	2.6	2.7	2.8	2.8	2.6	2.5	2.7	3.8	3.7	3.7
Չվնորություն, ձկնաբուծություն	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.1	0.0	0.2	0.2	0.3	0.3
Հանքագործական արդյունաբերություն	0.8	0.8	1.1	1.4	3.2	3.2	2.6	2.3	1.6	1.7	2.6	2.9
Հյուրանոցներ և ռեստորաններ	0.3	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.3	0.4	0.4	0.6	0.7	0.7
Ֆինանսական գործունեություն	1.9	1.9	1.5	1.4	1.6	1.8	2.1	2.5	3.4	3.9	3.6	4.0
Արհեստներ	3.4	3.3	3.2	3.0	3.0	2.8	2.8	2.8	2.7	3.6	3.5	3.4
Արտադրատեսակներ և սոցիալական ծառայությունների մատուցում	1.2	1.3	2.3	2.3	2.2	2.5	2.5	2.5	2.7	3.5	3.2	3.8
Կրճիտալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	2.1	1.5	1.5	1.6	1.5	1.3	1.3	1.3	1.2	1.8	1.8	1.8
Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
<b>Արտարժանքի հարկեր (համաձայն սուբսիդիաներ)</b>	<b>9.1</b>	<b>9.7</b>	<b>9.7</b>	<b>9.1</b>	<b>8.4</b>	<b>8.6</b>	<b>8.5</b>	<b>10.0</b>	<b>11.4</b>	<b>10.6</b>	<b>11.2</b>	<b>10.9</b>
<b>ՖՆԱԶՑ</b>	<b>-1.6</b>	<b>-1.4</b>	<b>-1.1</b>	<b>-1.1</b>	<b>-1.3</b>	<b>-1.2</b>	<b>-1.1</b>	<b>-1.4</b>	<b>-1.5</b>	<b>-1.6</b>	<b>-1.9</b>	<b>-2.6</b>
<b>Ներքին արդյունք (համախառն, չունակական գնեցող)</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Աղբյուրը: ՀՀ Ֆինանսների նախարարություն, [www.minfin.am](http://www.minfin.am)



Այսպիսով՝ տնտեսական անկման վրա ազդեցություն կարող են ունենալ «խոշոր ճյուղերը»՝ շինարարություն, գյուղատնտեսություն, առևտուր և մշակող արդյունաբերություն: Տրանսպորտ և կապ, էներգետիկա ճյուղերի դինամիկան հիմնականում պայմանավորվում է խոշոր ճյուղերով:

### 3. Երկնիշ տնտեսական աճի փուլի՝ շինարարության ընդլայնման մագնիտուդան

Ինչպես արդեն նշվեց, երկնիշ տնտեսական աճի փուլում տնտեսական աճ ապահովող գլխավոր ճյուղը շինարարությունն էր: Եթե 2000 թ. շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում էր ընդամենը 10.2%, ապա 2008 թ. վերջին 25.3% (գրեթե 2.5 անգամ աճել էր մասնաբաժինը): Միևնույն ժամանակ, ՀՆԱ կառուցվածքում մյուս խոշոր ճյուղերի տեսակարար կշիռներն էականորեն նվազել են՝ պայմանավորված շինարարության առաջանցիկ աճի տեմպով, ինչպես նաև մյուս ճյուղերի աճի տատանողականությամբ: Մասնավորապես՝ 2001-2008 թթ. ընթացքում միջին տարեկան իրական աճը շինարարության ոլորտում կազմել է շուրջ 25%, ընդ որում՝ տնտեսության մյուս խոշոր ճյուղերում, շինարարությունը չներառած, միջին տարեկան իրական աճը կազմել է ընդամենը 9% (աղյուսակ 10):

Այժմ հաշվարկենք շինարարության ընդլայնման մագնիտուդան 2001-2008 թթ. ընթացքում: Ըստ էության, շինարարության ընդլայնումը պայմանավորված էր առաջարկի և պահանջարկի դրական շոկային փոփոխություններով: Մասնավորապես՝ օտարերկրյա ներդրումների զգալի հատվածը ներարկված է տնտեսության այս հատված: Մյուս կողմից, վարկավորման նոր մեխանիզմների և տրանսֆերտների հաշվին ուժեղացավ նաև պահանջարկը:

### խոշոր և փոքր ճյուղերի իրական ծավալի ինդեքսները 2001-2008 թթ.

ՃՅՈՒՂԵՐ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
<i>իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %</i>								
<b>ՆՈՇՈՐ ՃՅՈՒՂԵՐ /ԱՃի Միջին ինդեքս/</b>	<b>↑ 108.9</b>	<b>↑ 114.0</b>	<b>↑ 115.3</b>	<b>↑ 110.6</b>	<b>↑ 114.3</b>	<b>↑ 109.5</b>	<b>↑ 111.1</b>	<b>→ 106.0</b>
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	↑ 112.1	→ 103.9	→ 104.2	↑ 114.5	↑ 111.3	→ 100.5	↑ 110.3	→ 103.0
Մշակող արդյունաբերություն	↑ 109.8	↑ 117.2	↑ 117.0	↓ 97.5	↑ 108.8	↓ 99.5	→ 101.6	→ 100.9
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	↓ 93.0	→ 101.7	→ 104.0	→ 107.2	→ 106.5	↓ 89.6	→ 105.8	→ 104.6
Շինարարություն	→ 105.4	↑ 141.7	↑ 145.4	↑ 115.4	↑ 127.9	↑ 137.7	↑ 118.2	↑ 111.3
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	↑ 117.3	↑ 121.1	↑ 112.7	↑ 109.8	↑ 113.4	↑ 112.4	↑ 108.8	↑ 108.0
Տրանսպորտ և կապ	↑ 115.8	↓ 98.3	↑ 108.3	↑ 119.5	↑ 118.0	↑ 117.0	↑ 122.0	↑ 108.4
<b>ՓՈՔՐ ՃՅՈՒՂԵՐ /Աճի միջին ինդեքս/</b>	<b>↑ 122.2</b>	<b>→ 107.5</b>	<b>↑ 115.1</b>	<b>↑ 123.1</b>	<b>↑ 110.1</b>	<b>↑ 113.3</b>	<b>↑ 119.2</b>	<b>↑ 114.4</b>
Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	→ 105.2	→ 106.3	→ 106.5	↑ 110.3	→ 106.0	↑ 132.9	↑ 116.1	↓ 98.6
Պետական կառավարում	→ 104.3	→ 106.4	↑ 118.3	↑ 126.5	↑ 118.9	↑ 111.7	→ 104.6	↓ 93.4
Զվնորություն, ձկնաբուծություն	↑ 216.2	↓ 77.4	↑ 132.4	↑ 172.1	↓ 87.1	↑ 119.5	↑ 127.5	↑ 212.9
Հանքագործական արդյունաբերություն	↑ 119.9	↑ 119.5	↑ 113.1	↑ 127.6	↓ 90.7	→ 101.2	→ 103.6	→ 103.8
Հյուրանոցներ և ռեստորաններ	↑ 142.3	→ 106.4	↑ 114.5	↑ 109.7	↑ 125.1	↓ 91.9	↑ 158.1	↑ 109.6
Ֆինանսական գործունեություն	↑ 111.6	↓ 91.8	→ 106.9	↑ 128.6	↑ 124.1	↑ 131.5	↑ 142.6	↑ 132.6
Կրթություն	→ 105.4	↑ 109.9	↑ 110.0	↑ 117.8	↑ 108.9	→ 106.1	→ 102.9	↓ 94.7
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	↑ 120.5	↑ 141.4	↑ 112.8	↓ 100.0	↑ 131.8	↑ 112.3	→ 105.7	↓ 93.0
Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	↓ 74.6	↑ 108.4	↑ 121.4	↑ 115.3	↓ 98.2	↑ 112.5	↑ 112.0	↓ 90.7
Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	n/a	n/a	n/a	n/a	n/a	n/a	↑ 130.3	↑ 292.7
<b>Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)</b>	116.9	114.3	107.9	102.4	112.4	114.9	135.9	117.1
<b>ՖՄԱԶՇ</b>	107.1	86.9	121.0	126.8	106.5	101.7	153.4	109.1
<b>Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)</b>	<b>↑ 109.6</b>	<b>↑ 113.2</b>	<b>↑ 114.0</b>	<b>↑ 110.5</b>	<b>↑ 113.9</b>	<b>↑ 113.2</b>	<b>↑ 113.7</b>	<b>→ 106.9</b>

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, [www.minfin.am](http://www.minfin.am)

Մագնիտուդայի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել շինարարության շուկային փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ի վրա՝ տոկոսային արտահայտությամբ, այլ կերպ ասած՝ ՀՆԱ իրական աճում քանի տոկոսային կետն է ապահովվել շինարարության հաշվին (աղյուսակ 11):

Աղյուսակ 11

**Շինարարության ազդեցությունը ՀՆԱ-ի վրա 2001-2008 թթ.**

(տոկոս)

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
ՀՆԱ իրական աճ	9.6	13.2	14.0	10.5	13.9	13.2	13.7	6.9
Շինարարության ներդրումը աճում, %-ային կետ	0.6	4.1	4.4	1.5	6.0	6.0	4.0	2.2
Այլ ճյուղերի ներդրումը	9.0	9.1	9.6	8.9	7.9	7.2	9.7	4.8

*Հաշվարկները կատարված են հետազոտական թիմի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների հիման վրա*

Աղյուսակ 11-ի հաշվարկներն արտացոլում են ՀՀ տնտեսության կառուցվածքային կարևոր տեղաշարժը. 2001-2008 թթ. ընթացքում ՀՀ տնտեսական երկնիշ աճը, ըստ էության, որակյալ տնտեսական աճ չի կարող համարվել, քանի որ առաջացել է կառուցվածքային էական կախվածություն տնտեսական մեկ ճյուղից, ընդ որում՝ բնույթով անկայուն:

Ըստ աղյուսակ 11-ի տվյալների՝ շինարարության դրական շուկի համար հաշվարկած **MESX ինդիկատորը հավասար է 0.94**, որը համարվում է ուժեղ և չորրորդ աստիճանի ընդլայնման շուկ: Հարկ է ընդգծել, որ համանման ցուցանիշ ԱՄՆ-ի տնտեսությունում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արձանագրվել է միայն 3 անգամ, ընդ որում՝ ոչ թե տնտեսության մեկ ճյուղի, այլ ամբողջ տնտեսության ընդլայնման մասշտաբով: Այս ցուցանիշի առկայությունը նախաճանաչման հատվածում ազդանշան էր տնտեսության բարձր զգայունությունը բացասական շուկերի հանդեպ, և ակնհայտ էր, որ ցանկացած բացասական շուկ, առանց մեծ լազային միջակայքի, պետք է հանգեցնեի տնտեսական աճի անկման, զբաղվածության նվազման և աղքատության մեծացման:

**4. Ճգնաժամի մագնիտուդայի գնահատումը Հայաստանի տնտեսության վրա**

Ինչպես արդեն նշեցինք, փոքր ճյուղերում դրսևորվող շուկերն էական ազդեցություն չունեն տնտեսական աճի վրա: Մինչդեռ երկնիշ տնտեսական աճի փուլում ձևավորված խոշոր ճյուղերի տատանումները կարող են մեծ ազդեցություն ունենալ: Մասնավորապես՝ դիտարկենք շինարարության, գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ազդեցությունը տնտեսական աճի վրա: Այս ճյուղերն առավել ավտոնոմ բնույթ ունեն և քիչ են կախված տնտեսության մյուս ճյուղերից: Տրանսպորտի և կապի ու էներգետիկայի ճյուղերի դինամիկան հիմնականում պայմանավորվում է խոշոր ճյուղերով:

Աղյուսակ 12-ի տվյալներից երևում է, որ բոլոր խոշոր ճյուղերը 2009 թ. անկում են ապրել, բացառությամբ՝ գյուղատնտեսության: Իսկ շինարարության իրական անկումը կազմել է շուրջ 41.6%՝ էական ազդեցություն ունենալով տնտեսության վրա:

Ներկայացնենք MESIC-ի ինդիկատորների արժեքները ֆինանսատնտեսական ճգնաժամի համար 2 ուղղություններով՝ արտաքին դրամական փոխանցումների նվազմամբ և շինարարության անկմամբ<sup>38</sup>:

**• Արտաքին դրամական փոխանցումների նվազում**

Արտաքին դրամական փոխանցումները 2009 թ. հունվարի սկզբից սկսեցին կտրուկ անկում ապրել՝ պայմանավորված ՌԴ-ից և ԱՄՆ-ից կատարվող փոխանցումների անկմամբ (գծ. 2): Արտաքին դրամական փոխանցումների անկումը շարունակվել է մինչև 2010 թ. հունվար, որից հետո տրանսֆերտների ծավալները սկսել են աճել: Հետազոտությունում շուկերի մասշտաբը հաշվարկելու համար հիմք է ընդունվել Համաշխարհային բանկի այն գնահատականը, որ տրանսֆերտների 50% անկման դեպքում արձանագրվում է ՀՆԱ 6.5% անկում: Այսպիսով՝ տրանսֆերտների անկման մասշտաբի ինդիկատորը՝ MESIC-ի ցուցանիշը, ստացվում է 0.31 (աղյուսակ 13):


<sup>38</sup> Թեպետ շինարարության անկումը պայմանավորված էր նաև տրանսֆերտների կրճատմամբ, սակայն հետազոտությունում այն դիտարկվում է որպես համընդհանուր ներքին շուկ, գնահատվում է շուկի մասշտաբը ՀՆԱ-ի նկատմամբ:

Աղյուսակ 12

Խոշոր և փոքր ճյուղերի իրական ծավալի ինդեքսները 2009-2011 թթ.

ՃՅՈՒՂԵՐ	2009	2010	2011
	իրական ծավալի ինդեքսները նայտորդ տարվա նկատմամբ, %		
<b>ԽՈՇՈՐ ՃՅՈՒՂԵՐ /ԱՃԻ ՄԻՋԻՆ ԻՆԴԵՔՍ/</b>	<b>88.2</b>	<b>100.5</b>	<b>104.9</b>
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	105.9	83.8	113.5
Մշակող արդյունաբերություն	92.9	112.1	113.4
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	86.7	93.7	106.3
Շինարարություն	58.4	103.3	87.5
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	95.2	102.9	104.1
Տրանսպորտ և կապ	90.1	107.0	104.4
<b>ՓՈՔՐ ՃՅՈՒՂԵՐ /ԱՃԻ միջին ԻՆԴԵՔՍ/</b>	<b>104.3</b>	<b>108.1</b>	<b>112.2</b>
Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	99.9	106.2	105.7
Պետական կառավարում	94.1	99.3	104.2
Զկնորսություն, ձկնաբուծություն	109.7	102.9	125.9
Հանքագործական արդյունաբերություն	106.3	122.8	122.5
Հյուրանոցներ և ռեստորաններ	123.5	119.6	102.3
Ֆինանսական գործունեություն	98.4	110.6	122.0
Կրթություն	102.2	104.6	108.8
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	96.0	98.6	107.2
Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	108.5	108.1	110.8
Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	113.4	106.6	100.9
<b>Արտադրանքի հարկեր (համաժ սուբսիդիաներ)</b>	77.5	113.4	104.3
<b>ՖՄԱԶԾ</b>	89.8	119.0	145.5
<b>Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)</b>	85.9	102.2	104.7

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, [www.minfin.am](http://www.minfin.am)




Գծապատկեր 3. Ամսական դրամական փոխանցումների ներհույս (հազ. ԱՄՆ դոլար)

• Շինարարության անկում

2009 թ. առաջին եռամսյակում շարունակվեց շինարարության ճյուղի աճը, քանի որ դեռևս պայմանագրային հարաբերությունները և կապիտալ տրանսֆերտները, բանկային համակարգի հարաբերական բարձր միջնորդությունը կասեցրին շինարարության անկումը, սակայն երկրորդ եռամսյակից սկսվեց շինարարության անկման գործընթացը:

Այնուամենայնիվ, 2010 թ. ընթացքում շինարարության ծավալներն առաջին, երկրորդ և չորրորդ եռամսյակներում աճեցին 2009 թ. համեմատ, սակայն երրորդ եռամսյակում անկում գրանցվեց: Այս տատանողականությունը պայմանավորված էր նրանով, որ կառավարությունը փորձեց կտրուկ կասեցնել շինարարության անկումը՝ աղետի գոտում իրականացնելով լայնածավալ բնակչի-

Նարարություն: Այնուամենայնիվ, անկումը հնարավոր չեղավ կանխել, քանի որ մասնավոր շինարարության ծավալները ներդրումների նվազեցման հետևանքով խիստ կրճատվեցին (գծ. 4):



Գծապատկեր 4. Շինարարություն (մլրդ ՀՀ դրամ)

MESC-ի հաշվարկման ժամանակ շինարարության անկման ազդեցությունը ՀՆԱ-ի վրա տարեկան կազմել է -9.7%: Հետևաբար՝ շինարարության անկման մասշտաբի ինդիկատորը՝ MESC-ի ցուցանիշը, ստացվում է 0.49 (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

MESC-ի ցուցանիշները ճգնաժամի ժամանակ

	Տոկոսային փոփոխություն (տարեկանացված), 2008 թ. նկատմամբ	ՀՆԱ տոկոսային փոփոխություն	Շոկի ժամկետը, ամիսը	MESC	Ազդեցության աստիճանը
Տրանսֆերտներ արտերկրից	-30%	-3.9%	13	0.31	II աստիճան
Շինարարության անկում	-38%	-9.7%	36	0.49	III աստիճան

Աղյուսակ 13-ի տվյալները վկայում են, որ շինարարության անկման ուժգնությունը բավականին բարձր է, քան տրանսֆերտների: Ընդ որում, ճգնաժամի բացասական հետևանքները ՀՀ տնտեսության համար ավելի սրվեցին՝ պայմանավորված գլխավորապես ոչ արդյունավետ տնտեսական աճի կառուցվածք ունենալու հանգամանքով: Այսպիսով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ձևավորված ոչ արդյունավետ տնտեսական կառուցվածքն այն հիմնական պատճառն էր, որ տնտեսության անկման նման բարձր ցուցանիշ արձանագրվեց:

Այնուամենայնիվ, ճգնաժամից հետո ևս Հայաստանի տնտեսության կառուցվածքն էականորեն չի փոխվել խոշոր ճյուղերի տեսանկյունից: Տնտեսական աճը շարունակում է կախված մնալ մի քանի խոշոր ճյուղերի զարգացումից, և դրանցից որևէ մեկում գրանցված բացասական շոկերն էականորեն ազդում են ՀՆԱ մակարդակի վրա (աղյուսակ 14):

Վերոշարադրյալից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- Հայաստանի տնտեսությունը խիստ բարձր ճյուղային կենտրոնացվածություն ունի, բացի այդ, ՀՆԱ 70 տոկոսն արտադրում է 2 տոկոս կազմող խոշոր ընկերությունների և պետական հատվածի կողմից, որի հետևանքով տնտեսությունը մեծ կախվածություն է ունենում առանձին խոշոր տնտեսավարող սուբյեկտների վարքից:
- Երկնիշ տնտեսական աճի փուլում շինարարության նմանատիպ աճը հանգեցրեց տնտեսության շոկային զգայունության անկման: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ երկնիշ տնտեսական աճը որակյալ չէր:
- 2009-2010 թթ. ճգնաժամի ազդեցության վերլուծությունները, ըստ Կոչիայի մեթոդաբանության, վկայում են, որ Հայաստանում շինարարության ճյուղի անկման ուժգնությունը բավականին բարձր է, իսկ տրանսֆերտների՝ չափավոր:

Խոշոր ճյուղերի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա

Ճյուղեր	Ազդեցությունը ՀՆԱ-ի վրա (%)
Խոշոր ճյուղերի խմբին պատկանող բոլոր ճյուղերի 5% անկում	-0.6
Խոշոր ճյուղերի խմբին պատկանող բոլոր ճյուղերի 10% անկում	-6.5
Շինարարության 10% անկում	-1.2
Շինարարության 50% անկում	-6.1
Գյուղատնտեսության 10% անկում	-1.9
Գյուղատնտեսության 50% անկում	-9.6
Մշակող արդյունաբերության 10% անկում	-1.0
Մշակող արդյունաբերության 50% անկում	-5.0

**6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԻ ԻՆՂԵՔՍԸ**

«Հ տնտեսության տնտեսական աճի որակի ինդեքսը կառուցվել է 2002-2012 թթ. համար՝ ըստ որոշակի քանակական և որակական ցուցանիշների համակարգի: Դա արտահայտում է հասարակության բարեկեցության մակարդակի փոփոխությունը նշված ժամանակահատվածում, ընդ որում՝ ինդեքսի հիմքում ոչ միայն բարեկեցությունը բնութագրող ֆինանսատնտեսական ցուցանիշներ են, այլև այնպիսի որակական ցուցանիշներ, որոնք բնութագրում են բնապահպանության, քաղաքական ազատության, ինստիտուտների կայացման մակարդակները և այլն:

Աղյուսակ 15-ում ներկայացված են 10 ենթահամակարգ և համապատասխան ցուցանիշներ:

Ինդեքսի առավելագույն արժեքը 10 միավոր է, իսկ յուրաքանչյուր ենթահամակարգի առավելագույն արժեքը՝ 1 միավոր: Ընդ որում, յուրաքանչյուր ենթահամակարգ ունի հավասար կշիռ, իսկ դրա բոլոր ցուցանիշները՝ միևնույն կշիռը: Ընտրվել է ինդեքսի կառուցման այդ մոտեցումը, քանի որ ոչ հավասար տեսակարար կշիռների սկզբունքի կիրառման համար անհրաժեշտ է առաջին՝ ունենալ ավելի երկար պատմական շարքեր, երկրորդ՝ կատարել սոցիոլոգիական որոշակի հարցումներ՝ գնահատելու համար հասարակության կողմից նշված ենթահամակարգերի նախընտրությունները:

Ենթահամակարգերում ընդգրկված ցուցանիշներն ունեն տարբեր չափման միավորներ, իսկ ինդեքսային արժեքներ են ստանում ներքոնշյալ մեթոդաբանությամբ:

Այն դեպքերում, երբ ցուցանիշի բարձր արժեքն արտահայտում է ավելի դրական ազդեցություն տնտեսական աճի որակի վրա (նմանատիպ ցուցանիշ է, օրինակ՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն), ապա ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$\text{ցուցանիշի ինդեքսային արժեքը} = (\text{տվյալ տարվա ցուցանիշ} - \text{տվյալ ցուցանիշի շարքի նվազագույն արժեք}) / (\text{շարքի մեծագույն արժեք} - \text{շարքի փոքրագույն արժեք}):$$

**Ինդեքսի ենթահամակարգերը և ցուցանիշները**

Ազդեցության սեկտորներ/ ցուցանիշներ	Ենթահամակարգեր	Ցուցանիշի տեսակարար կշիռը ենթահամակարգում
<b>Ենթահամակարգ 1:</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակ</b>	<b>100.0%</b>
	Ցուցանիշ 1:	SS արտադրումը /ՀՆԱ
	Ցուցանիշ 2:	SS արտադրումի մասնաբաժինն արտադրանքում մեջ
<b>Ենթահամակարգ 2:</b>	Ցուցանիշ 3:	SS արտադրումի հավելանի տեմպ
	<b>Գիտակրթական գործունեության մակարդակ</b>	<b>100.0%</b>
	Ցուցանիշ 1:	Գիտակրթական ծախսեր /ՀՆԱ
<b>Ենթահամակարգ 3:</b>	Ցուցանիշ 2:	Գիտակրթական ծախսերի հավելանի տեմպ
	Ցուցանիշ 3:	Գիտակրթական ծախսերի մեջ պետական ծախսերի կշիռը
	Ցուցանիշ 4:	Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տես. կշիռը
	Ցուցանիշ 5:	Պատենտների և լիցենզիաների վաճառքի ծավալ
<b>Ենթահամակարգ 4:</b>	Ցուցանիշ 1:	<b>Տնտեսական անվտանգության իրակիճակը</b>
	Ցուցանիշ 2:	Սեկ շնչի հաշվով ՀՆԱ
<b>Ենթահամակարգ 5:</b>	Ցուցանիշ 3:	Սերոլուոմների մակարդակը ՀՆԱ-ի մատունամբ
	Ցուցանիշ 4:	Կենսամակագոյնից ցածր եկամուտ ունեցող բնակչության տեսակարար կշիռը
	Ցուցանիշ 5:	Կրտաքին պայտոջը ՀՆԱ-ի մվատունամբ
	Ցուցանիշ 6:	Գործազրկության մակարդակը
	Ցուցանիշ 7:	<b>Բնակահպանության մակարդակ</b>
<b>Ենթահամակարգ 6:</b>	Ցուցանիշ 1:	Ֆեյիի համարչարանի հաշվարկած համաթիվ
	Ցուցանիշ 2:	<b>Առողջապահության մակարդակ</b>
	Ցուցանիշ 3:	Առողջապահական ծախսեր /ՀՆԱ
	Ցուցանիշ 4:	Բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով
	Ցուցանիշ 5:	1000 բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը
<b>Ենթահամակարգ 7:</b>	Ցուցանիշ 1:	Սորաթիմների մտահոգության մակարդակը
	Ցուցանիշ 2:	Կյանքի սպասվող տևողությունը
	Ցուցանիշ 3:	Կրտաքին պայտոջը ՀՆԱ-ի մվատունամբ
	Ցուցանիշ 4:	Գործազրկության մակարդակը
	Ցուցանիշ 5:	<b>Բնակահպանության մակարդակ</b>
<b>Ենթահամակարգ 8:</b>	Ցուցանիշ 1:	Ֆեյիի համարչարանի հաշվարկած համաթիվ
	Ցուցանիշ 2:	<b>Առողջապահության մակարդակ</b>
	Ցուցանիշ 3:	Առողջապահական ծախսեր /ՀՆԱ
	Ցուցանիշ 4:	Բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով
	Ցուցանիշ 5:	1000 բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը
<b>Ենթահամակարգ 9:</b>	Ցուցանիշ 1:	Սորաթիմների մտահոգության մակարդակը
	Ցուցանիշ 2:	Կյանքի սպասվող տևողությունը
	Ցուցանիշ 3:	Կրտաքին պայտոջը ՀՆԱ-ի մվատունամբ
	Ցուցանիշ 4:	Գործազրկության մակարդակը
	Ցուցանիշ 5:	<b>Բնակահպանության մակարդակ</b>
<b>Ենթահամակարգ 10:</b>	Ցուցանիշ 1:	Ֆեյիի համարչարանի հաշվարկած համաթիվ
	Ցուցանիշ 2:	<b>Առողջապահության մակարդակ</b>
	Ցուցանիշ 3:	Առողջապահական ծախսեր /ՀՆԱ
	Ցուցանիշ 4:	Բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով
	Ցուցանիշ 5:	1000 բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների թիվը

Ենթահամակարգ 6:	Սշակույթ և ազատ ժամանակ	100.0%
Ցուցանիշ 1:	Հանգստի և մշակութային միջոցառումների վրա կատարված ծախսերի տես. կշիռը ծախսությունների մեջ	33%
Ցուցանիշ 2:	Տուրիստական ծախսությունների արժեքը ընդհանուր ծախսությունների մեջ	33%
<b>Ենթահամակարգ 7:</b>	<b>Նյութական բարեկեցություն</b>	<b>100.0%</b>
Ցուցանիշ 1:	Սեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն /PPP, 2005թ./, ԱՄՆ դոլար	25%
Ցուցանիշ 2:	Միջին աշխատավարձի մակարդակ / նվազագույն աշխատավարձի մեծություն	25%
Ցուցանիշ 3:	Սեկ շնչի հաշվով բնակչության մակերես	25%
Ցուցանիշ 4:	Սերմունքված ավտոմեքենաների թիվը 10,000 բնակչի հաշվով	25%
<b>Ենթահամակարգ 8:</b>	<b>Քաղաքական կայունություն, ազատություն և անվտանգության մակարդակ</b>	<b>100.0%</b>
Ցուցանիշ 1:	Ազատության պայտաթիվ համաթիվ	100%
<b>Ենթահամակարգ 9:</b>	<b>Ինստիտուտների կայացման մակարդակ</b>	<b>100.0%</b>
Ցուցանիշ 1:	Ինստիտուցիոնալ կատարողականի ցուցիչ /Համաշխարհային տնտեսական ֆորում/	100%
<b>Ենթահամակարգ 10:</b>	<b>Ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակ</b>	<b>100.0%</b>
Ցուցանիշ 1:	100 քառ. կմ-ի վրա երկաթգծերի երկարությունը /կմ/	25%
Ցուցանիշ 2:	100 քառ. կմ-ի վրա ճանապարհների երկարությունը /կմ/	25%
Ցուցանիշ 3:	Համացանցի օգտատերերի քանակը 100 մարդու հաշվով	25%
Ցուցանիշ 4:	Հեռախոսային գծերի քանակը 100 մարդու հաշվով	25%

Օրինակ՝ հաշվարկենք մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշը 2005 թ. համար: Ենթադրենք՝ տվյալ տարվա ցուցանիշը պայմանականորեն հավասար է 100 միավորի, իսկ 2002-2012 թթ. շարքում առավելագույն արժեքը 300 միավոր է, փոքրագույնը՝ 50 միավոր: Այս դեպքում 2005 թ. ինդեքսային արժեքը հավասար կլինի՝  $(100-50)/(300-50)=1/5=0.2$ :

Երբ ցուցանիշի բարձր արժեքն արտահայտում է ավելի բացասական ազդեցություն տնտեսական աճի որակի վրա (նմանատիպ ցուցանիշ է, օրինակ՝ գործազրկության մակարդակը), ապա ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$\text{ցուցանիշի ինդեքսային արժեքը} = 1 - (\text{տվյալ տարվա ցուցանիշ} - \text{տվյալ ցուցանիշի շարքի նվազագույն արժեք}) / (\text{շարքի մեծագույն արժեք} - \text{շարքի փոքրագույն արժեք}):$$

Նշված մեթոդաբանությամբ հաշվարկված ինդեքսի արժեքները ներկայացված են աղյուսակ 16-ում<sup>39</sup>:

Աղյուսակ 16


**Ինդեքսի արժեքները 2002-2012 թթ.**

ԵՆԹԱՀԱՄԱՎՈՐՈՐ ԵՎ ԻՆԴԵՔՍ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման մակարդակ	0.19	0.23	0.28	0.26	0.59	0.52	0.58	0.67	0.61	0.39	0.39
Գիտակրթական գործունեության մակարդակ	0.49	0.43	0.41	0.55	0.54	0.38	0.55	0.47	0.33	0.52	0.47
Տնտեսական անվտանգության իրավիճակ	0.23	0.28	0.40	0.62	0.79	0.90	0.96	0.53	0.44	0.27	0.37
Բնապահպանության մակարդակ	0.15	0.37	0.43	0.00	0.44	0.34	0.31	0.94	1.00	1.00	1.00
Առողջապահության մակարդակ	0.36	0.47	0.49	0.57	0.52	0.43	0.44	0.56	0.62	0.67	0.71
Մշակույթ և ազատ ժամանակ	0.04	0.18	0.07	0.14	0.12	0.17	0.23	0.50	0.64	0.66	1.00
Նյութական բարեկեցություն	0.10	0.09	0.36	0.44	0.54	0.76	0.86	0.63	0.67	0.79	0.92
Քաղաքական ազատության մակարդակ	1.00	1.00	1.00	0.50	0.50	0.50	0.50	0.00	0.00	0.00	0.00
Ինստիտուտների կայացման մակարդակ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.33	0.33	0.33	1.00	1.00	1.00
Ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակ	0.25	0.33	0.38	0.22	0.25	0.31	0.78	0.73	0.73	0.73	0.79
<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԻ ԻՆԴԵՔՍ</b>	<b>2.81</b>	<b>3.37</b>	<b>3.82</b>	<b>3.30</b>	<b>4.30</b>	<b>4.65</b>	<b>5.55</b>	<b>5.36</b>	<b>6.03</b>	<b>6.04</b>	<b>6.65</b>

<sup>39</sup> Ինդեքսի հաշվարկման ցուցանիշները վերցվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարեգրքերից, ՀՀ կենտրոնական բանկի և Համաշխարհային բանկի տվյալների բազաներից, Գլոբալ մրցունակության զեկույցներից (World Economic Forum) և Յեյի համալսարանի բնապահպանական հետազոտությունների տվյալների բազայից (Ecological Performance Index):

Աղյուսակ 16-ի տվյալներից կարելի է եզրակացնել, որ 2005 թ. և 2009 թ. առկա է ինդեքսի անկում: 2005 թ. ինդեքսի նվազումը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման, բնապահպանության և քաղաքական ազատության մակարդակների ենթահամակարգերի ինդեքսային արժեքների անկմամբ: Մինչդեռ 2009 թ. ինդեքսի նվազումը հետևանք է գիտակրթական գործունեության, տնտեսական անվտանգության իրավիճակի, նյութական բարեկեցության, քաղաքական ազատության և ֆիզիկական ենթակառուցվածքների ապահովման մակարդակների ենթահամակարգերի ինդեքսային արժեքների անկման:

Այժմ ներկայացնենք տնտեսական աճի ցուցանիշի (ՀՆԱ աճ) և ինդեքսի ցուցանիշների շարժընթացը 2002-2012 թթ. (գծ. 5):



Գծապատկեր 5. Տնտեսական աճի որակի ինդեքսը և ՀՆԱ աճը 2002-2012 թթ.

Գծապատկերից երևում է՝ թեև 2005 թ. արձանագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշ՝ գրեթե 15%, սակայն ինդեքսը նվազել է, որը, ինչպես արդեն նշեցինք, պայմանավորված է որոշ ենթահամակարգերում արձանագրված անկումներով:

Այնուամենայնիվ, ներկայացված պարզ ինդեքսն ունի որոշակի սահմանափակումներ, ուստի հարկավոր է այն լրամշակել մի քանի ուղղություններով: Առաջին՝ յուրաքանչյուր հասարակության համար, բարեկեցության առումով, նշված ենթահամակարգերի նախ-

ընտրելիության աստիճանները տարբեր են, ուստի անհրաժեշտ է գնահատել և հաշվարկել յուրաքանչյուր ենթահամակարգի ազդեցության չափն ընդհանուր ինդեքսի վրա: Երկրորդ՝ նշված 10 ենթահամակարգերը, ըստ էության, ամբողջովին չեն արտահայտում «տնտեսական աճի որակ» հասկացությունը, ուստի դա պետք է ավելացնել: Մասնավորապես՝ հարկ է ավելացնել համակարգեր, որոնք կրնաթագրեն հասարակությունում տեղի ունեցող խորքային այնպիսի երևույթներ, ինչպիսիք են կյանքի բավարարվածության աստիճանը, արժեհամակարգում իրականացվող փոփոխությունները և այլն:

## Գրականության ցանկ

1. Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2011 թթ., էջ 31, [http://www.armstat.am/file/article/poverty\\_2012a\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf)
2. Տնտեսական բարեփոխումների առանձնահատկություններն ու փուլերը Հայաստանում 1991-1998 թթ., Վիճակագրական նյութերի ժողովածու, 1999, [www.armstat.am/file/article/tntbar/91\\_98i](http://www.armstat.am/file/article/tntbar/91_98i)
3. Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997 թթ., Վիճակագրական նյութերի ժողովածու, 1998, [www.armstat.am/file/article/azghashiv\\_90\\_97\\_.pdf](http://www.armstat.am/file/article/azghashiv_90_97_.pdf)
4. Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, [www.minfin.am/main.php.lang/macroid&iseng](http://www.minfin.am/main.php.lang/macroid&iseng)
5. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, տարեգրքեր, 2000-2012 թթ.:
6. Հայաստանի տնտեսական զարգացումներ, 2007 թ. տարեկան զեկույց, AEPLAC, 2008:
7. Антипина О., Экономическая теория счастья как направление научных исследований, „Вопросы экономики”, N3, с. 95-107.
8. Кузнец С., Современный экономический рост: результаты исследований и размышлений. Нобелевская лекция, Нобелевские лауреаты по экономике: взгляд из России; Под ред. Ю.В. Яковца. СПб.: Гуманистика, 2008.
9. Кузнецова Н.П., Экономический рост: история и современность: Учебное пособие. СПб.: Издательский дом Сентябрь, 2001.
10. Кларк Дж.Б., Распределение богатства. М.: Гелиос, 2003.
11. Стиглиц Дж.Ю., Экономика государственного сектора. М.: Изд-во МГУ, ИНФРА-М, 1977.
12. David Romer, „Advanced macroeconomics”, University of California, Berkeley, 2001.
13. Gregory Mankiv, „Macroeconomics” sixth edition, Harvard university, 2006.
14. Лисин В.С., Макроэкономическая теория и политика



- экономического роста. М.: Экономика, 2004.
15. Крюгер Э., Экономический рост и реформы в России. // Вопросы экономики. 2009.
  16. Радыгин А., Энтов Р., В поисках институциональных характеристик экономического роста (новые подходы на рубеже XX-XI вв). // Вопросы экономики, 2008, № 8.
  17. Абалкин Л.И., Динамика и противоречия экономического роста. М.: Экономист, 2001, № 12.
  18. Αεηηαδεή ί ί ά Α., Οάαί δί άά Ε., Αί ηοάαδηόάαί ί ύέ ηάεοί δ δί ηηεήηεί ε ύέί ί ί έεε: έί ί όόδύ άρααάο-ί ί άί δάάοέεδί άάί έύ. Ι δί άέάί ύ όάί δέε έ ί δάεοέέε όί δάάέάί έύ, Ν1, 2002.
  19. Мау В., Экономическая политика 2007 г.: успехи и риски. // Вопросы экономики, 2008, № 2.
  20. Макаров В., Об экономическом развитии и не только в контексте будущих достижений науки и техники. // Вопросы экономики, 2008, № 3.
  21. Горбунов Э.П., Качество и цена экономического роста, Москва, 1988.
  22. Зубов В.М., Качество экономического роста, Красноярск, Изд. Красноярского юньта, 1991.
  23. Узяков М.Н., Будущее России: инерционное развитие или инновационный прорыв/Проблемы прогнозирования, N5, 2005.
  24. Горегляд В.П., Инновационный путь развития для новой России, М., Наука 2005.
  25. Узяков М.Н., Трансформация российской экономики и возможности экономического роста, М., Изд-во ИСЭПН, 2000.
  26. Кузнецова Н.П., Экономический рост в историческом контексте. СПб, Изд-во СПб гос. Ун-та, 1996.
  27. Кривоносова Л.А., Управление качеством жизни населения. Хабаровск, Изд-во ДВАГС, 2005.
  28. Heinberg R., *The End of Growth: Adapting to Our New Economic Reality*. New Society Publishers; Original edition, 2011. 336p.
  29. Jackson T., *Prosperity without Growth: Economics for a Finite Planet*. Routledge; Reprint edition, 2011. 288 p.
  30. Stiglitz J., Sen A., Fitoussi J., *Mismeasuring Our Lives: Why GDP Doesn't Add Up*. New Press, 2010. 176 p.
  31. Kuznets S., *Modern Economic Growth: Findings and Reflections*, Nobel lecture delivered in Stockholm. *American Economic Review* 63, 1973.
  32. Rostow W.W., *The Stages of Economic Growth: A non-communist manifesto*. Cambridge Univ. Press, 1960
  33. Solow R., *Toward a Macroeconomics of the Medium Run* // *Journal of Economic Perspectives*, 2000, V. 14, N1.
  34. Meadows D.H., Randers J., Meadows D.L. *Limits to Growth: The 30-Year Update*, Chelsea Green Publishing, 2004, 338p.
  35. Gordon R., *Is U.S. Economic Growth Over? Faltering Innovation Confronts the Six Headwinds*. NBER Working Paper No. 18315, Issued in August 2012.
  36. Prescott, Edward C. (1986), "Theory Ahead of Business Cycle Measurement," Carnegie Rochester Conference Series on Public Policy.
  37. Business cycles and the scale of economic shock, Mario Coccia, National Research Council (Italy), Working Paper Ceris-Cnr, № 6/2009.
  38. ECONOMIC IMPACT ANALYSIS, Presented by Mike D. Woods & Suzette Barta, Oklahoma Cooperative Extension Service, Oklahoma State University,
  39. The Caucasian Tiger, Sustaining Economic Growth in Armenia, World Bank, 2007.
  40. Remittances and Poverty in Central Asia, Household Survey Report, Economic Development and Research Center (EDRC), 2008, <http://www.edrc.am/public.html?ID=25>
  41. Doing Business 2011, Armenia, Making a difference for Entrepreneurs, The International Bank for Reconstruction and Development.
  42. Keynes J., *The General Theory of Employment, Interest and Money*, Harcourt Brace, London, 1994.
  43. The New Keynesian Economics and the Output-Inflation Trade-Off, Mankiw, Romer, Ball, Brookings Papers on Economic Activity, 1 : 1988.

- [www.armstat.am](http://www.armstat.am)
- [www.cba.am](http://www.cba.am)
- [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)
- [www.minfin.am](http://www.minfin.am)
- [www.imf.org](http://www.imf.org)
- [www.worldbank.org](http://www.worldbank.org)
- [www.nber.org](http://www.nber.org)
- [www.ssrn.com](http://www.ssrn.com)
- [www.bis.org](http://www.bis.org)
- [www.ev.am](http://www.ev.am)

## АННОТАЦИЯ

---

О.И. Агаджанян, А.А. Варданян, Т.М. Мкртчян,  
А.А. Петросян, А.Г. Минасян

### *Качество экономического роста*

Для оценки качества экономического роста необходимо уяснить некоторые вопросы: измеримость экономического роста, качественные характеристики экономического роста, отраслевая структура экономики и темп развития экономики, степень чувствительности экономики к шокам.

Представлена система показателей, которая характеризует качества экономического роста. Это уровень приобретения информационной технологии, защиты окружающей среды, здравоохранения, продовольственной безопасности, формирования институтов, условий и безопасности труда, физических инфраструктур, восприятия счастья и системы ценностей.

Уяснение характеристики экономического роста в контексте развития, исследованы сущность и общий круг основной проблемы, основные элементы качества экономического роста, качества экономического роста в контексте концепции развития, типичные характеристики общества и экономического строя как фактор определяющего(прогнозируемого) экономического роста.

Качество экономического роста обусловлено также структурным изменением экономики. Основываясь на этом проанализирована динамика экономического роста и использования ВВП, взаимосвязь между государственными затратами и экономическим ростом, качество экономического роста и преодоления бедности.

С точки зрения воздействия на экономический рост степени чувствительности к шокам рассмотрена методология оценки сила шока на экономическую систему, задачи подъема крупных отраслей Армении в 2001-2008гг. и оценки магнитуды кризиса 2008-2009гг.

На основе ряд вышеуказанных показателей представлена методологию исчисления индекса экономического роста.

## SUMMARY

---

H.I. Agadjanyan, A.A. Vardanyan, T.M. Mkrtychyan,  
A.A. Petrosyan, H.H. Minasyan

### *The Quality of Economic Growth*

To assess the quality of economic growth it is necessary to clarify some aspects of it: the measurability of economic growth, quality characteristics of economic growth, the structure of economy, the economical development speed and the vulnerability of the economy towards economic shocks.

It is presented the system of measures to evaluate the quality of the economic growth. The subsystems of the measures are the following: penetration level of information technologies, environmental security level, health system, food security level, institutional development level, employment conditions and security level, physical infrastructure level, perception level of happiness and system of values.

Within the context of the development, it was analyzed the essence and general cycle of the main problem, the main elements of quality of economic growth, typical characteristics of society and economical order as a factor of economic growth.

The quality of economic growth is also determined by the structural changes of the economy. Based on this fact, it was analyzed the dynamics of economic growth, GDP structure, the correlation between public costs and economic growth, the quality of economic growth and overcoming the poverty.

It was analyzed the methodology to assess the vulnerability towards economic shocks. Particularly, it was presented the main issues regarding to the centralization of the big sectors of the economy during the growth period (2001-2008). Also it was presented magnitude of economic shocks during crises (2008-2009).

Based on the certain assumptions, it is presented the methodology of designing index of quality of economic growth.

**ՀՊՏՀ ՆԵՐՀԱՄԱՆՍԱՐԱՆԱԿԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ**

**Ծրագրի գիտական ղեկավար՝**  
տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Ի. Աղաջանյան

**Կատարողներ՝**  
տ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Վարդանյան  
տ.գ.թ., դոցենտ Թ.Մ. Մկրտչյան  
տ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Պետրոսյան  
ասպիրանտ Հ.Հ. Մինասյան

### **Տնտեսական աճի որակը**

Խմբագիր՝ Ս. Ալավերդյան  
Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պեպրոսյանի  
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 60x84<sup>1/16</sup>:  
5,4 տպ. մամուլ:  
Տպաքանակ՝ 100:

---

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն  
Երևան, Նալբանդյան 128  
010 59 34 37